205.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Տավուշի մարզի Նավուր համայնքի մշակույթի տուն-համայնքային կենտրոն շենքի վերանորոգում՝ 90000 հազար դրամ	ՀՀ կառավարության 03.02.2011թ. № 108-Ն որոշմամբ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Տավուշի մարզի Նավուրի համայնքային կենտրոնի վերանորոգման նպատակով հատկացվել է 47.4 մլն դրամ: Լրացուցիչ գումարի հատկացման հարցը կքննարկվի ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Առաջարկության դիրքորոշումը
206.	«Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	«Արարատի մարզ Ղուկասավան համայնքի մշակույթի տան կապիտալ հիմնանորոգում՝ 69000 հազար դրամ	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
207.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան	1. Ստվերային տնտեսության մեջ գտնվող օլիգարխներին և խոշոր բիզնեսը հարկման դաշտ բերման գործընթացը սկսելու հաշվին արդեն 2012թ. հարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ում 16,8%-ից հասցնել ոչ թե 17,36%-ի, ինչպես որ կառավարությունն է առաջարկում 2012թ. բյուջեի նախագծում, այլ մինչև 23%, որի շնորհիվ բուջե մուտքագրել հավելյալ շուրջ 245 մլրդ դրամ գումար: Ըստ Համաշխարհային բանկի գնահատականի լիովին իրատեսական է արդեն 2012թ. Հայաստանում ՀՆԱ/հարկեր հարաբերակցությունը ավելացնել 5,8%-ով: Այսինքն՝ հասցնել այն շուրջ 23%-ի: Միևնույն ժամանակ ՀՀ կառավարության 2009-2011թթ Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով ՀՆԱ/հարկեր հարաբերակցությունը արդեն 2011թ. պետք է հասներ 19%-ի: Մինչդեռ 2010թ. այն փաստացի կազմել է ընդամենը 16,88%, 2011թ. ըստ «ՀՀ 2011թ. Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի պետք է կազմեր 17,27%, սակայն սպասվում է, որ փաստացի կկազմի ընդամենը 16,79%, իսկ 2012թ. համար կառավարությունն առաջարկում է 17,36% : Փաստորեն, ոչ միայն կատարված չէ «ՀՀ 2011թ. Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, այլև կառավարությունը որևէ կամք կամ ունակություն ստվերի դեմ պայքարի ուղղությամբ չի ցուցաբերում: Պահանջվում է գործող օրենքների կիրառում, որի շնորհիվ բյուջե մուտքագրել հավելյալ շուրջ 245 մլրդ դրամ գումար:	Առաջիկա տարիներին հարկային եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացումը ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության գերակա ուղղություններից մեկն է, ինչի շնորհիվ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների հարաբերությունը կավելացվի տարեկան միջին հաշվով 0.3-0.4 տոկոսային կետով՝ առանց հարկային դրույքաչափերի ավելացման: Կառավարությունը հարկային եկամուտների ավելացման իր հիմնական նպատակին հասնելու է հատկապես տնտեսական գործունեության ստվերային և ոչ ֆորմալ մասի կրճատման միջոցով: Ստվերային տնտեսության կրճատման հաշվին 1 տարում միայն 2012 թվականին շուրջ 245 մլրդ դրամ հավելյալ հարկ հավաքագրելու կամ հարկային եկամուտները մոտ 1/3-ով ավելացնելու վերաբերյալ Ձեր առաջարկությունը գտնում ենք անիրատեսական: Այս առումով հարկ է նշել նաև, որ, ըստ «ՀՀ հարկաբյուջետային կոնսոլիդացում և վերականգնում» փաստաթղթի, Համաշխարհային բանկի մասնագետները ևս գտնում են, որ են նման միջոցառումները հնարավոր չէ իրականացնել 1 տարում:
208.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան	2. «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի Հոդված 3-ով պահանջվող շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման դիմաց բնապահպանական վճարների ամբողջական գանձման արդյունքում մետաղական հանքերը շահագործող տնտեսվարող սուբյեկտներից գանձել պետական բյուջե 418 մլրդ դրամ գումար: «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի Հոդված 3-ով պահանջվող շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կար-	«Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանված են արտադրության և սպառման թափոնների շրջակա միջավայրում տեղադրման դիմաց բնապահպանական վճարների դրույքաչափերը, հաշվարկման և վճարման մեխանիզմները: Ներկայացված առաջարկությունը օրենսդրական փոփոխություններ չի պահանջում, և ՀՀ 2012թ. պետական բյուջեի նախագծի լրամշակման շրջանակներում քննարկման ենթակա

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>գով տեղադրման դիմաց բնապահպանական վճարների ամբողջական գանձման արդյունքում միայն Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից, որը 2010թ. արդյունահանել է շուրջ 16 մլն տոննա հանքանյութ և շրջակա միջավայրում տեղադրել գրեթե նույնքան առնվազն 2-րդ կարգի թափոններ, պետք է ՀՀ պետ. բյուջե մուտքագրվեր 384 մլրդ դրամ գումար (այդ գումարները նախատեսված են ոչ մետաղական հանքերի դեպքում առաջիկա 100 տարվա, իսկ մետաղական հանքերի դեպքում առաջիկա 1000 տարվա համար պոչանքների պահպանության և սպասարկման, շրջակա միջավայրի աղտոտման կառավարման համար): Իսկ ընդհանուր առմամբ 2001թ. ի վեր տեղադրվել են շուրջ 100 մլն տոննա թափոններ (պոչանք): 2007թ. ի վեր, երբ ընդունվել է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը, Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը տեղադրել է ավելի քան 55 մլն տոննա թափոններ, որի համար պարտավոր էր, սակայն չի վճարել Հայաստանի Հանրապետությանը 1,3 տրլն դրամ, կամ շուրջ 4 միլիարդ դոլար: Սոթքի և Մեղրաձորի ոսկու հանքերը շահագործող «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ընկերությունը, որը 2004թ. վեր արդյունահանել է գրեթե 1 մլն տոննա հանքանյութ և շրջակա միջավայրում տեղադրել նույնքան 1-ին կարգի թափոններ, պետք է ՀՀ պետ. բյուջե մուտքագրվեր 48 մլրդ դրամ գումար (որից շուրջ 14 մլրդ վերջին տարվա համար): Պաշտոնապես գրանցված մյուս 12 պոչանքների «տեղադրման» համար դրանց մայր հանքերը շահագործող տնտեսվարող սուբյեկտները 2011թ. արդյունահանման ծավալները պահպանելու դեպքում 2012թ. պարտավոր կլինեն վճարել պետությանը ևս ավելի քան 20 մլրդ դրամ: Այսպիսով «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի Հոդված 3-ով պահանջվող շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման դիմաց բնապահպանական վճարների ամբողջական գանձման արդյունքում 2012թ. հնարավոր է բյուջե մուտքագրել հավելյալ 428 մլրդ դրամ կամ շուրջ 1,1 մլրդ դոլար :</p> <p>Առայժմ չենք անդրադառնում ՀՀ տարածքում հաշվառված 470 հանքարդյունաբերական օբյեկտների շահագործման արդյունքում գոյացող «դատարկ ապարների» տեղահանման և տեղադրման</p>	<p>առաջարկություն չէ:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>համար դրանց շահագործող տնտեսվարող սուբյեկտներից բնապահպանական վճարների գանձման անհրաժեշտության և այդ նպատակով օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությանը:</p> <p>Պահանջվում է գործող օրենքի լիարժեք կիրառում:</p>	
209.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան</p>	<p>3. Բյուջետային հավելյալ եկամուտներ՝ պետական ձեռնարկությունների և հանքավայրերի ապօրինի, չհիմնավորված ցածր գներով, պետությանը հասցված խոշոր չափերի վնասի ուղեկցությամբ իրականացված մասնավորեցումների վերանայման, պետականացման և նոր մասնավորեցման հաշվին՝ բաց և թափանցիկ մրցույթների հիման վրա:</p> <p>Միայն Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, Հրազդան, Աբովյան քաղաքներում և Սյունիքի մարզի Սվարանց գյուղում գտնվող երեք երկաթահանքերի հետ կապված ապօրինի և սուվերային գործարքների վերանայման շնորհիվ հնարավոր է պետության բյուջե վերադարձնել ավելի քան 266 մլրդ դրամ գումար:</p> <p>1. 2004 թվականի դեկտեմբերին կնքված գործարքի համաձայն Չանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատը 132 մլն ԱՄՆ դոլարով վաճառվել է՝ 60 տոկոսը «գերմանական» «Chronomet»-ին, 15%-ը «Մաքուր երկաթ» ԲԲԸ-ին, 12,5-ական տոկոսը «Armenian Molybdenum Production» ՓԲԸ և «Zangezur Mining» ՍՊԸ-ին: Ընդ որում գնորդները 2004թ. վերջին վճարել են ընդամենը 42 մլն ԱՄՆ դոլարը, մնացյալ 90 մլն-ը վճարել են արդեն 2005թ. հանքից ստացված 120 մլն դոլար շահույթից: Աշխարհի մոլիբդենի պաշարների 7%-ի պարունակությամբ հանքի 25 տարվա շահագործման իրավունքով կոնցեսիոն պայմանագրով հանդերձ ԶՊՄԿ-ի իրական շուկայական արժեքը 2004թ. դրությամբ ըստ տարբեր փորձագիտական գնահատականների տատանվել է 1-1,5 մլրդ դոլարի շրջանակներում, իսկ այժմ, պղնձի և մոլիբդենի գների էապես աճի արդյունքում այն անցնում է 2 մլրդ դոլարից: Այնպես որ, անգամ ներկա սեփականատերերին իրենց կատարած ներդրումների հաշվին վերջիններիս այդ ձեռնարկության շուրջ 20%-ի փայաբաժին թողնելու դեպքում էլ հնարավոր է մնացած 29% փայաբաժնի վաճառքից մուտքագրել բյուջե շուրջ 600 մլն դոլարին համարժեք 228</p>	<p>1. «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», «Դինո-Գոլդ Մայնինգ Քամփնի», «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերություններին պատկանող գույքի մասնավորեցումը կատարվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենսդրական ակտերի հիման վրա:</p> <p>Ընդերքը, համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 4-րդ հոդվածի, հանդիսանում է պետության բացառիկ սեփականություն և սեփականաշնորհման ենթակա է:</p> <p>Ընդերքի տեղամասերը չեն կարող հանդիսանալ առք ու վաճառքի, գրավի առարկա կամ օտարվել այլ ձևով:</p> <p>Ընդերք օգտագործման իրավունքը կարող է օտարվել կամ անցնել մեկ օգտագործողից մյուսին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p> <p>Վերը նշված ընկերություններին հանքային իրավունքները տրամադրվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով և «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:</p> <p>«Նագին» ՍՊԸ-ի, որի իրավահաջորդն են հանդիսանում «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊ և «Սփայս Սթիլ Արմենիա» ՓԲ ընկերությունները, Հրազդանի երկաթի հանքավայրի շահագործման հանքային իրավունքի տրամադրման գործընթացը կատարվել է մինչև «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքում հանքավայրերը աճուրդով տրամադրելու փոփոխությունների ընդունումը:</p> <p>Սվարանցի երկաթի հանքավայրը տրամադրված է</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Առաջարկության դիրքորոշումը»
		<p>մլրդ դրամ, իսկ վերահսկիչ փաթեթը պահպանելով պետության սեփականության ներքո ապահովել կայուն ամենամյա բյուջետային մուտքեր 60 մլն դոլարին համարժեք շուրջ 23 մլրդ դրամի չափով:</p> <p>2. Հրազդան, Աբովյան քաղաքներում և Սյունիքի մարզի Սվարանց գյուղում գտնվող երեք երկաթահանքերը, որոնք չնչին գումարներով մասնավորեցվել էին «Nagin» և «Սփայս Սթիլ Արմենիա» ՓԲԸ-ներին: Վերավաճառքների արդյունքում 2011թ.-ին հանքերի բաժնետոմսերի 50%-ը 40 մլն դոլարով վաճառվել է Լոնդոնի բորսայում գնանշվող չինական Fortune Oil ընկերությանը: Այս գործարքը ևս, որպես կոռուպցիոն ռիսկ պարունակող, վերանայելու միջոցով հնարավոր է «Nagin» և «Սփայս Սթիլ Արմենիա»/Bounty Resources Armenia» ընկերություններից պետ. բյուջե գանձել 80 մլն դոլարին համարժեք շուրջ 30 մլրդ դրամ, որից 15 մլրդ-ը դրամի, իսկ մնացածը՝ 50% բաժնեմասի տեսքով:</p> <p>Միայն այս երկու գործարքների վերանայման արդյունքում հնարավոր է 2012թ. բյուջե մուտքագրել 266 մլրդ դրամ գումար, ներառյալ նույն թվականին ՁՊՄԿ-ի պետականացված բաժնեմասից ստացված շահույթը:</p> <p>Չհիմնավորված ցածր գներով, պետությանը հասցված խոշոր չափերի վնասի ուղեկցությամբ իրականացված մյուս նմանատիպ մասնավորեցումների (Ագարակի լեռնահարստացուցիչ ֆաբրիկա, Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատ, Հայկական ԲԷՑ-եր, «TWT»-«Արմենթել», Հրազդան գետի ՀԷԿ-երի կասկադ, Հրազդանի ՊՇԷԿ, «Հայրուսզագարդ» և այլն) վերանայման արդյունքում բյուջե մուտքագրվելիք գումարները կարող են հասնել հարյուրավոր միլիարդ դրամի:</p> <p>Պահանջվում է նոր օրենքների ընդունում և համապատասխան օրենքներում փոփոխությունների իրականացում:</p>	<p>երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով:</p> <p>Ներկա պահին «Առաջարկության» մասին օրենսգրքի նոր նախագիծը Ազգային ժողովի կողմից քննարկման փուլում է, և այդ խնդիրը կարող է լուծվել հանքարդյունահանման ոլորտում ճկուն հարկային քաղաքականության ներդրմամբ, որն իր հերթին կառաջացնի իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացում:</p> <p>Նշված բոլոր ձեռնարկությունները մասնավորեցվել են «Առաջարկության» ժողովի կողմից ընդունված օրենքներին համապատասխան:</p> <p>«Ժառանգություն» պատգամավորական խմբակցությունը կարող է օգտվել օրենսդրական նախաձեռնության իր իրավունքից:</p>
210.	«Առաջարկության» ժողովի «Ժառանգություն» պատգամավորական	Շրջանառության վրա Պրոգրեսիվ հարկի կիրառում իրավաբանական անձ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների հանդեպ սկսած 30 մլն դրամ շրջանառությունից արտադրական և սպա-	Առաջարկության ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար հետևյալ հիմնավորումներով Առաջարկության ընդունման արդյունքում կստեղծվի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	<p>Խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան</p>	<p>սարկման ոլորտի ընկերությունների դեպքում եւ 60 մլն դրամ առետրով զբաղվող ընկերությունների դեպքում, միաժամանակ լիովին ազատելով շահութահարկից տարեկան մինչեւ 30 մլն դրամ շրջանառություն ունեցող արտադրական և սպասարկման ոլորտի ընկերությունները եւ մինչեւ 60 մլն դրամ շրջանառություն ունեցող առետրով զբաղվող ընկերությունները: Այս փոփոխությունից բյուջե մուտքագրվող գումարները կմնան անփոփոխ:</p> <p>Հարկի կիրառումը նպատակահարմար է հարկային բեռը փոքր բիզնեսից դեպի խոշոր բիզնես տեղափոխելու առումով, ինչը կնպաստի հավելյալ աշխատատեղերի ստեղծմանը, տնտեսության կառուցվածքի փոփոխությանը եւ ճկունացմանը, օլիգոպոլ տնտեսությունից ազատ շուկայականի անցմանը, ինչպես նաեւ սոցիալական գերբեվեռացումը մեղմելուն և արտագաղթի կասեցմանը: Շրջանառության վրա Պրոգրեսիվ հարկի կիրառում իրավաբանական անձ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների հանդեպ տարեկան 30-100 մլն շրջանառության դեպքում 0,25% դրույքաչափով (առետրով զբաղվող ընկերությունների պարագայում տարեկան 30-100 մլն շրջանառության դեպքում), 100-250 մլն-ի դեպքում 0,5%, 250-500 մլն՝ 0,75%, 500-750 մլն՝ 1%, 750-1000 մլն՝ 1,25%, 1000-1500 մլն՝ 1,5%, 1500-2000 մլն՝ 1,75%, 2000-3000 մլն՝ 2%, 3000-5000 մլն՝ 2,25%, 5000-7500 մլն՝ 2,5%, 7500-10000 մլն՝ 2,75%, 10000-15000 մլն՝ 3%, 15000-20000 մլն՝ 3,25%, 20000-30000 մլն՝ 3,5%, 30000-40000 մլն՝ 3,75%, 40000-50000 մլն՝ 4%, 50000-75000 մլն՝ 4,25%, 75000-100000 մլն՝ 4,5% եւ 100000 մլն-ից ավելի շրջանառության դեպքում 4.75%: Մյուս կողմից լիովին ազատել շահութահարկից տարեկան մինչեւ 30 մլն դրամ շրջանառություն ունեցող արտադրական եւ սպասարկման ոլորտի ընկերությունները և մինչեւ 60 մլն դրամ շրջանառություն ունեցող առետրով զբաղվող ընկերությունները: Այս փոփոխության արդյունքում ընդհանուր առմամբ բյուջե մուտքագրվող գումարները չեն ավելանալու, քանի որ հաշվարկը պետք է կատարվի այնպես, որ նոր Պրոգրեսիվ հարկի կիրառումից գոյանա այնքան գումար, որը կփոխհատուցի մինչեւ 30/60 մլն դրամ շրջանառություն ունեցող ընկերությունները շահութահարկից ազատելու արդյունքում բյուջե թերմուտքագրված գումարը: Դա ապահովելու</p>	<p>մի իրավիճակ, երբ խոշոր ընկերությունները ստիպված կլինեն վճարել ավելացված արժեքի հարկ և առաջարկվող շրջանառության հարկը, իսկ փոքր և միջին ձեռնարկատերերը միայն շրջանառության հարկ: Արդյունքում, առաջարկության ընդունումը առավել բացասաբար կանդրադառնա փոքր և միջին ձեռնարկատիրության վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոքր և միջին ձեռնարկատերերը կզրկվեն մատակարարներին վճարված ավելացված արժեքի հարկի գծով հաշվանցումներ ծախսագրումներ) կատարելու իրավունքից, ինչը նշանակում է, որ մի կողմից կվճարեն մատակարարների ԱԱՀ-ն, իսկ մյուս կողմից՝ շրջանառության հարկը:</p> <p>Առաջարկության ընդունումը չի բխում</p> <p>ա) հարկման արդարության սկզբունքից, քանի որ շրջանառության հարկի ներդրումը ենթադրում է, որ տարեկան հարկի գումարի հաշվարկում կատարվելու է առանց ծախսերի հաշվառման, ինչը անհավասար պայմաններ կստեղծի տնտեսության համեմատաբար ավելի ծախսատար ճյուղերի համար, և չի նպաստի փաստաթղթավորման առկա խնդիրների կարգավորմանը,</p> <p>բ) ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկին, այն է հնարավորինս զերծ մնալ հարկման այլընտրանքային համակարգերից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Նպատակով Շրջանառության վրա Պրոգրեսիվ հարկի դրույքաչափերը կարող են համամասնորեն փոփոխվել (ավելացվել կամ պակասեցվել):</p> <p>Պահանջվում է օրենսդրական փոփոխություն:</p>	
211.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաֆֆի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան</p>	<p>5. Շքեղության միանվագ հարկի կիրառում ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի՝ 700 մլն դրամը գերազանցող սեփականության՝ անշարժ գույքի, ներառյալ հողի հանդեպ: Ակնկալվող բյուջետային նվազագույն մուտքերը՝ 200 մլրդ դրամ: Շքեղության միանվագ հարկը միտված է մինչ այժմ ապօրինի, «վայրի կապիտալիզմի» շրջանում կուտակած սեփականության հանդեպ յուրահատուկ «համաներման» կիրառմանը՝ որոշակի գումար գանձելուց հետո, ինչպես նաև սոցիալական գերբևեռացումը մեղմելուն և արտագաղթի կասեցմանը: Միանվագությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս հարկի շարունակական լինելու դեպքում այն կարող է դառնալ խոչընդոտ անշարժ գույքի մեջ ներդրումներ իրականացնելու առումով և խթանել կապիտալի արտահոսքը երկրից: Շքեղության միանվագ հարկն առաջարկվում է կիրառել հետևյալ սանդղակով. 700-1000 մլն դրամի դեպքում՝ 3%, 1-1,5 մլրդ դրամի դեպքում՝ 5%, 1,5-2 մլրդ դրամի դեպքում՝ 7%, 2-3 մլրդ դրամի դեպքում՝ 9%, 3 մլրդ դրամից ավելի՝ 10%, իսկ մեքենաների (բացի էկոլոգիապես անվտանգ վառելանյութ/ էներգիա օգտագործող շարժիչ ունեցողներից) դեպքում հետևյալ սանդղակով. 15-25 մլն դրամ արժողությամբ մեքենայի դեպքում՝ 10%, 25-35 մլն դրամ արժողությամբ մեքենայի դեպքում՝ 15%, 35-50 մլն դրամ արժողությամբ մեքենայի դեպքում՝ 20%, 50 մլն դրամից բարձր արժողությամբ մեքենայի դեպքում՝ 30%:</p> <p>Պահանջվում է օրենսդրական փոփոխություն:</p>	<p>Շքեղության հարկումը հարկային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է: Գտնում ենք, սակայն, որ շքեղության հարկումը պետք է իրականացվի աստիճանաբար՝ չեզոքացնելու համար տնտեսության վրա հնարավոր բացասական ազդեցությունները: Այդ կապակցությամբ ՀՀ կառավարությունն արդեն իսկ իրականացրել է առաջին քայլերը. խոսքը, մասնավորապես, ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող հարկային օրենսդրության փոփոխություններ նախատեսող օրենսդրական նախագծերի փաթեթում ներառված «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող շքեղ ավտոմեքենաների ակցիզային հարկով հարկման ընթացակարգերի մասին է: Միաժամանակ նախատեսվում է առաջիկայում ևս միջոցառումներ ձեռնարկել շքեղության այլ առարկաների (թանկարժեք իրերի և գույքի, ինչպես նաև արժեթղթերի) հարկման ընթացակարգեր սահմանելու ուղղությամբ:</p>
212.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաֆֆի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան</p>	<p>Գույքահարկի ավելացում 200 մլն դրամը գերազանցող այն չափախատող ակտիվների, այսինքն ոչ բնակելի այն անշարժ գույքի վրա, որի գործարկումից այլ հարկային մուտքեր բյուջե չի կատարվում: Առաջացած գումարներն ուղղել համայնքային բյուջեներ:</p> <p>Առաջարկի նպատակը ոչ այնքան ֆիսկալ է, որքան՝ չափախտող ակտիվների գործարկումը խթանելը, իսկ անհնարինության դեպքում</p>	<p>Հարցը բազմիցս բարձրացվել է տարբեր մարմինների կողմից: Չափախտող (չօգտագործված) ակտիվների որոշման հարցը բավականին խնդրահարույց է, քանի որ հնարավոր է, որ դրանք օգտագործվեն մասամբ, օգտագործվեն ըստ սեզոնների կամ տարվա տարբեր ժամանակահատվածներում: Մյուս կողմից, գույքի գործարկումից կարող է բյուջե</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>քում դրանց վաճառքն ավելի արդյունավետ սեփականատերերի, ընկերությունների, որոնք կկարողանան դրանք գործարկել: Այդ իսկ պատճառով այս միջոցառման կիրառման արդյունքում ակնկալվող հավելյալ մուտքերը որպես բյուջետային եկամուտներ չեն հաշվարկվի, այլ կուղղվեն անմիջականորեն ՀՀ պահուստային հիմնադրամ:</p> <p>Գույքահարկի նշված ավելացումն առաջարկվում է իրականացնել 2012թ-ի համար 20%-ով ամեն հաջորդ տարի ավելացնելով ևս 20%-ով մինչև 100%: 2015թ-ի համար: Հողի հարկի դեպքում գույքահարկի ավելացումը կիրառելիս հաշվի առնել հողի կատեգորիաները:</p> <p>Պահանջվում է իրականացնել փոփոխություններ համապատասխան օրենքներում:</p>	<p>մուտքեր չկատարվեն դրանց վնասով աշխատելու պատճառով, այլ ոչ թե չաշխատելու: Միայն գույքի գործարկումից հարկային մուտքեր բյուջե չկատարելու հիման վրա լրացուցիչ գույքահարկի սահմանումը գտնում ենք, որ լրացուցիչ քննարկման կարիք ունի:</p> <p>Միաժամանակ առաջարկվող դրույքաչափերը շատ բարձր են, ինչը նույնպես կարիք ունի լրացուցիչ քննարկման:</p> <p>Հարցը նաև վերաբերվում է մարդուն իր սեփականություն իրավունքից զրկելուն, ինչը հակասում է ՀՀ սահմանադրությանը:</p>
213.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան</p>	<p>Ոչ գյուղատնտեսական նպատակներով պետական հողերի վարձակալության համար գանձվող վարձավճարների ավելացում 5 անգամ:</p> <p>Առաջացած գումարներն ուղղել համայնքային բյուջեներ:</p> <p>Ոչ գյուղատնտեսական նպատակներով պետական հողերի վարձակալության վարձավճարների դրույքաչափերը շատ փոքր են, ինչը բերում է մեծ հողակտորների երկարաժամկետ վարձակալության շահավետության՝ երբեմն առանց այդ հողերի արդյունավետ օգտագործման, երբեմն էլ հսկայական տարածքների՝ շարքային քաղաքացիների համար փակ գոտիների վերածման: Վարձավճարների դրույքաչափի ավելացումը կբերի նշված խնդրի մասնակի լուծմանը, դրա հետևանքների մեղմացմանը:</p> <p>Պահանջվում է ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունում:</p>	<p>Գործող օրենսդրության համաձայն համայնքների վարչական տարածքում տեղաբաշխված պետական սեփականություն հանդիսացող հողերի վարձակալությունից ստացված եկամուտները արդեն իսկ հանդիսանում են համայնքային բյուջեների եկամուտներ: Միաժամանակ գտնում ենք, որ ոչ գյուղատնտեսական հողերի վարձավճարների դրույքաչափի ավելացման հարցը լրացուցիչ քննարկման կարիք ունի:</p>
214.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան,</p>	<p>Եկամտահարկի պրոգրեսիվ սանդղակի կիրառում հետեւյալ կերպ. մինչև 70 հազար դրամը՝ 0%, 70-300 հազար դրամը՝ 3500 դրամ գումարած 70000 դրամը գերազանցող գումարի 3 %, 300-800 հազար դրամը՝ 30000 գումարած 300000 դրամը գերազանցող</p>	<p>Առաջարկությունն ընդունելի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում վճարվող աշխատավաճի շատ քիչ մասն է գերազանցում 300 հազ. դրամը, առաջարկի ընդունումը կհանգեցնի եկամտահարկի գծով պետական բյուջեի եկամուտների 2-4 անգամ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Ստյոպա Սաֆարյան	գումարի 15%, 800000-1,5 մլն դրամը՝ 120000 գումարած 800000 դրամը գերազանցող գումարի 20%, 1,5-5 մլն դրամը՝ 300000 գումարած 1,5 մլն դրամը գերազանցող գումարի 25%, 5-10 մլն դրամը 1,25 մլն դրամ, գումարած 5 մլն դրամը գերազանցող գումարի 30%, 10 մլն դրամից ավելի գումարի դեպքում՝ 3,5 մլն դրամ գումարած 10 մլն դրամը գերազանցող գումարի 35%: Եկամտահարկի պրոգրեսիվ սանդղակի կիրառման Կառավարության ներկայացրած նախագիծը, որով առաջարկվում է երկաստիճան պրոգրեսիա, ընդ որում 2 մլն դրամ սահմանագծով արդարացված չէ, անչափ կտրուկ լինելու, միանգամից շատ բարձր նշաճող սահմանելու, նաև գերբարձր եկամուտների հանդեպ պրոգրեսիա չկիրառելու պատճառով: Մեր կողմից առաջարկվող սանդղակը/պրոգրեսիան առավել սահուն, ճկուն և եկամտի չափերի աճին համարժեք և համամասնորեն անդրադարձող է: Պահանջվում է իրականացնել փոփոխություններ համապատասխան օրենքներում:	<p>նվազեցման:</p> <p>Միաժամանակ եկամտահարկի առաջարկվող բազմամակարդակ սանդղակի կիրառումը՝</p> <p>ա) չի բխում կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շրջանակներում 2013 թվականից ուժի մեջ մտնող միասնական եկամտային հարկի տրամաբանությունից, որով 2013 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում կկիրառվի միասնական եկամտային հարկի դրույքաչափ,</p> <p>բ) չի բխում եկամտահարկի դրույքաչափի պրոգրեսիվության կիրառման միաջգագային փորձից: Մասնավորապես եվրոպական երկրների լավագույն փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ կարող է համարվել եկամտահարկի դրույքաչափերի առավելագույնը քառաստիճան սանդղակը,</p> <p>գ) ինչպես հարկ վճարողների, այնպես հարկային մարմինների համար կհանգեցնի լուրջ վարչարարական խնդիրների և բարդությունների:</p>
215.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցությունն Ռաֆֆի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան	Պետական հատվածի աշխատողների աշխատավարձերը բարձրացնել 30%-ով, որի նպատակով բյուջեից հատկացնել հավելյալ 32 մլրդ դրամ: 1,2,3 և 5 կետերում առաջարկվող միջոցառումների շնորհիվ 2012թ.-ին բյուջե հավելյալ 1 մլրդ 129 մլն դրամի մուտքագրման շնորհիվ հնարավոր կդառնա պետական հատվածի աշխատողների աշխատավարձերը բարձրացնել 30%-ով, ինչը կբերի սոցիալական բեռնացման նվազմանը և սոցիալական լարվածության թուլացմանը, պետական հատվածի աշխատողների աշխատանքի արդյունավետության և պատասխանատվության բարձրացմանը: Պետական հատվածի աշխատողների թվում պետական ծառայողների և քաղծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը սահմանել 111.000 դրամ, իսկ միջին աշխատավարձը հասցնել 210.000 դրամի: Դա կապահովի պետական հատվածի մրցունակության ավելացմանը մասնավորի հանդեպ ել բարձր որակավորում ունեցող մասնագետների արտահոսքի կանխմանը թե պետական հատվածից դեպի մասնավոր և թե երկրից նրանց արտագաղթի դադարեցմանը:	<p>Առաջարկությունը չի ընդունվել, աշխատավարձերի բարձրացում կատարելը ցանկալի է, սակայն դա ներկայումս հնարավոր չէ, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p> <p>Պետական հատվածի աշխատողների թվում պետական ծառայողների և քաղծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը 111.000 դրամ սահմանելու, իսկ միջին աշխատավարձը 210.000 դրամ հասցնելու դեպքում կտրուկ կավելանան ՀՀ պետական բյուջեի ծախսերը, ինչը 2012 թվականի պետական բյուջեի կանխատեսվող եկամուտների պայմաններում հնարավոր չէ ապահովել:</p> <p>Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով սոցիալական</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Պահանջվում է իրականացնել փոփոխություններ համապատասխան օրենքներում:	փաթեթի տեսքով նախատեսված բյուջետային աջակցությունը տարածվում է նաև պետական հատվածի աշխատողների վրա:
216.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան	Կենսաթոշակների նվազագույն չափը հասցնել նվազագույն կենսապահովման զամբյուղի ցուցանիշին՝ 65.000 դրամի: Այդ նպատակով ծերության համար նախատեսվող գումարներն ավելացնել 184 մլրդ դրամով (450000 թոշակառուի հաշվարկով): Կենսաթոշակների նվազագույն չափի համապատասխանեցումը նվազագույն կենսապահովման զամբյուղի ցուցանիշին մշտապես եղել է «Ժառանգության» պահանջը: Մինչև 2007 թ. հիմնականում այս միջոցառումը 2007 և 2008թ.-ի ընտրություններից առաջ խոստացել էին իրականացնել համապատասխանաբար իշխող կուսակցությունն ու ՀՀ գործող նախագահը: Կենսապահովման զամբյուղը հաշվարկված է որպես մեկ անձի կենսագործունեության համար անհրաժեշտ նվազագույն գումար, որից ցածր կենսաթոշակի շեմ սահմանելը հակատրամաբանական է, հակամարդկային, հակասում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ-ի կողմից վավերացված բազմաթիվ միջազգային կոնվենցիաների դրույթներին, տարրական հումանիտական և սոցիալական համերաշխության սկզբունքներին: Ի վերջո այսօրվա թոշակառուների քրտինքով են ժամանակին ստեղծվել այն հսկայական ենթակառուցները, որոնց անխնա շահագործման միջոցով հարստացել են և շարունակում են գերշահույթներ ստանալ մերօրյա օլիգարխները:	Առաջարկությունը չի ընդունվել: Նվազագույն կենսաթոշակի չափը 65000 դրամ սահմանելու համար միայն աշխատանքային կենսաթոշակի գծով լրացուցիչ կպահանջվի շուրջ 280.8 մլրդ. դրամ (450.0 հազ. կենսաթոշակառու*(կենսաթոշակի հիմնական չափը՝ 65.0 հազ. դրամ-13.0 հազ. դրամ)*12 ամիս), իսկ վճարման ծառայության հետ միասին՝ 283.6 մլրդ. դրամ, ինչը իրատեսական չէ ՀՀ պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:
217.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան	Նվազեցնել 2012թ-ին նախատեսվող հարկային մուտքերը՝ գրահրատարակչության ոլորտը ավելացված արժեքի հարկից և շահութահարկից ամբողջությամբ ազատելու արդյունքում բյուջե չմուտքագրված գումարների չափով: 2012թ-ին Երևանը հայտարարված է Գրքի միջազգային մայրաքաղաք: Սակայն Հայաստանում վերջին տարիներին մեկը մյուսի հետևից սկսել են փակվել գրախանութները, իսկ գրադարանները չեն համալրվում նորագույն գրականությամբ: Դրա կարևորագույն պատճառներից մեկը գրահրատարակչության ոլորտում կիրառվող հարկերի արդյունքում գրքերի բարձր գներն են: Դա բերում է գրքերի ցածր տպաքանակներին, գրահրատարակչության ցածր	Առաջարկության ընդունումը ըստ էության չի կարող լուծել ոլորտի՝ գնագոյացմանն առնչվող խնդիրները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝ ա) տպագրական աշխատանքներն ավելացված արժեքի հարկից ազատելը առանձնապես չի իջեցնի հրատարակչական արտադրանքի գները, քանի որ տպագրական աշխատանքների արժեքն իր մեջ կներառի այդ աշխատանքների իրականացման համար կատարված ձեռքբերումների գծով (էլեկտրա-էներգիա, ջուր, ընդհանուր տնտեսական ծախսերի մասով ձեռքբերումներ և այլն) ավելացված արժեքի հարկի գումարները,

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>շահութաբերությանը, չի նպաստում նորագույն արտասահմանյան գեղարվեստական և գիտա-հանրամատչելի գրականության թարգմանությանը:</p> <p>Պահանջվում է իրականացնել փոփոխություններ համապատասխան օրենքներում:</p>	<p>բ) շահութահարկը ապրանքի կամ ծառայության գնագոյացման տարր չէ, ինչը նշանակում է, որ շահութահարկի գծով արտոնության սահմանումը էականորեն չի ազդի տպագրական աշատանքների գների վրա:</p>
218.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաֆֆի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան</p>	<p>Նվազեցնել 2012թ.-ին նախատեսվող հարկային մուտքերը ավտոմեքենաների պարտադիր տեխնիկական դրույթի կիրառության դադարեցման արդյունքում համապատասխան հարկային մուտքերի մասով թերմուտքագրված գումարների մասով: Տեխնիկական վերջին տարիների պրակտիկական ցույց տվեց դրա անարդյունավետությունը եւ ձեւական բնույթը: Մեքենաների տեխնիկական վիճակի կազմակերպումն ու վերահսկողությունը անհրաժեշտ է օրենքով ամրագրել դրանք ապահովագրող ընկերությունների վրա:</p> <p>Պահանջվում է իրականացնել փոփոխություններ համապատասխան օրենքներում:</p>	<p>Տեխնիկական զննության պարտադիր պայմանը կարևոր է ելնելով ճանապարհային երթևեկության անվտանգության նկատառումներից, ինչպես նաև Եվրոխորհրդի 96/96 կանոնակարգով տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացումը և կտրոնի առկայությունը պարտադիր պայման է, առանց որի մուտքը Եվրոպա արգելվում է:</p> <p>Ինչ վերաբերում է մեքենաների տեխնիկական վիճակի կազմակերպումն ու վերահսկողությունը ապահովագրող ընկերություններին ամրագրելու հարցին, ապա հարկ ենք համարում նշել, որ միջազգային փորձում նման պրակտիկական բացակայում է. ապահովագրական ընկերությունները չեն զբաղվում տեխնիկական գործունեությամբ, մասնավորապես՝ ավտոմեքենաների տեխնիկական վիճակի կազմակերպման ու վերահսկողության անցկացմամբ, որի համար անհրաժեշտ է համապատասխան սարքավորումների, մասնագետների և փորձի առկայություն: Ապահովագրական ընկերությունները ֆինանսական շուկայի մասնակիցներ են, և նրանց գործառույթը ֆինանսական, այլ ոչ թե տեխնիկական ծառայություններ մատուցելն է, այլ կերպ ասած՝ ապահովագրական ընկերությունների գործունեությունը սահմանափակվում է բացառապես ֆինանսական շուկայում ապահովագրական բնույթի ծառայությունների մատուցմամբ:</p>
219.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Նվազեցնել 2012թ.-ին նախատեսվող հարկային մուտքերը սահմանամերձ և բարձր լեռնային բլուր բնակավայրերի մասով այդ բնակավայրերում հաշվառված մեկ անձին սեփականության իրավունքով պատկանող մինչև 700 մլն արժողությամբ գույքի եւ մինչև 30</p>	<p>Սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի մարտական գործողությունների հետևանքով չօգտագործված հողերն ազատված են հողի հարկից 1994 թվականից սկսած:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Բաժնի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան	<p>հա հողատարածքների հանդեպ հարկման գրոյական դրույքաչափերի կիրառման արդյունքում:</p> <p>Այս առաջարկությունը կթեթեվացնի սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի բնակչության սոցիալական վիճակը և կխրախուսի նրանց մնալ իրենց հայրենի տարածաշրջաններում:</p> <p>Պահանջվում է իրականացնել փոփոխություններ համապատասխան օրենքներում:</p>	<p>Միաժամանակ, գույքահարկի եւ հողի հարկի հաշվարկման հիմքում դրված են գոտիականության գործակիցներ, որոնք սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում բավականին ցածր են, ինչը իր հերթին փոքրացնում է դրանց կադաստրային արժեքները և համապատասխանաբար դրանց մասով հաշվարկված գույքահարկն ու հողի հարկը:</p> <p>Միաժամանակ գտնում ենք, որ անձի նկատմամբ, որն ունի 700 մլն արժողությամբ գույք և մինչև 30 հա հողատարածք, նման արտոնությունների կիրառումը սոցիալական կողմնորոշում ունենալ չի կարող:</p>
220.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p> <p>Բաժնի Հովհաննիսյան, Ստյոպա Սաֆարյան</p>	<p>Նվազեցնել 2012թ.-ին նախատեսվող հարկային մուտքերը ՏՏ ոլորտում (ներառյալ Ինտերնետ տիրույթը) ծավալվող ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն (բացի Ինտերնետում շահումով խաղերից) ԱԱՀ-ից եւ շահութահարկից 4 տարով ազատելու արդյունքում արդեն 2012թ. բյուջե թերմուտքագրված գումարների չափով:</p> <p>Ըստ միջազգային հեղինակավոր փորձագիտական կազմակերպությունների հաշվարկների՝ 2050թ. աշխարհում ՏՏ ոլորտում արտադրված ՀՆԱ-ն կգերազանցի վառելիքաէներգետիկ ոլորտում արտադրվող ՀՆԱ-ին: ՏՏ ոլորտը Հայաստանում իշխանությունների կողմից հռչակվել է որպես գերակա, սակայն այն խթանող պետական ծրագրերը խիստ անբավարար են այդ ոլորտի ողջ ներուժի բացահայտման և առաջընթաց տեմպերով դրա զարգացման համար: Մինչդեռ՝ լինելով գիտելիքահեն, գիտության և կրթության զարգացումը խթանող, տրանսպորտային ծախսեր չպահանջող, տնտեսության և կառավարման արդյունավետության բարձրացմանը նպաստող՝ ՏՏ ոլորտը առավել մեծ հեռանկար ունի զարգանալու և կարիքն ունի ամենաբարձր մակարդակի խրախուսման:</p> <p>Պահանջվում է իրականացնել փոփոխություններ համապատասխան օրենքներում:</p>	<p>Նախ անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ՝</p> <p>ա) ՏՏ ոլորտը հիմնականում արտահանման ուղղվածություն ունի, իսկ արտահանումն արդեն իսկ ազատված է հարկերից,</p> <p>բ) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, հարկ վճարողի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գիտահետազոտական և փորձակրոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերի չափով՝ այդ ծախսերի կատարման տարվա ընթացքում ամբողջովին: Հետևաբար ՏՏ ոլորտը, գիտահետազոտական հետազոտությունների մասով, արդեն իսկ օգտվում է հարկային արտոնություններից:</p> <p>Տնտեսության որևէ ճյուղի համար հարկային արտոնությունների սահմանումը որպես կանոն հետապնդում է այդ ճյուղի զարգացումը խթանելու նպատակ, ինչը ենթադրում է, որ սահմանված արտոնությունները պետք է փոխհատուցվեն արտոնյալ ժամանակահատվածից հետո տվյալ ոլորտում առաջացող լրացուցիչ արդյունքի միջոցով: Հետևաբար ՏՏ ոլորտի համար արտոնությունների սահմանումը պետք է հիմնավորվի նախ և առաջ գործող իրավական դաշտի աննպաստ ազդեցությամբ, որը կարծում ենք առկա չէ, և արտոնյալ ժամանակահատվածի ավարտից</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			հետո SS ոլորտից սպասվելիք լրացուցիչ եկամուտների իրատեսական կանխատեսումներով:
221.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	Արտաքին հարաբերությունների համար հատկացվող գումարների ծավալն ավելացնել 3 մլրդ դրամով, այդ թվում ՀՀ արտաքին գործերի նախարարությանը հատկացվող 159 մլն դրամ բյուջետային միջոցների ավելացում 841 մլն դրամով: Վերջին շրջանում արտաքին հարաբերությունների ոլորտում Հայաստանի անհաջողությունները որոշ մասով պայմանավորված են անբավարար ֆինանսավորմամբ, ինչը պարտավորեցնում է ՀՀ-ին ավելացնել այս ոլորտին հատկացվող համապատասխան բյուջետային մասհանումները:	Արտաքին հարաբերությունների համար հատկացվող գումարների ծավալն 3 մլրդ դրամով ավելացնելու մասին առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության պահպանման ծախսերի համար նախագծով նախատեսված է 999.5 մլն դրամ:
222.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	Բանակի բյուջետային ֆինանսավորումն ավելացնել հավելյալ 42 մլրդ դրամով (շուրջ 111 մլն դոլար): Նշված գումարից Ռազմական պաշտպանության համար տրամադրել 30 մլրդ դրամ, Արտաքին ռազմական օգնության համար՝ 2 մլրդ դրամ, Պաշտպանական ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների համար՝ 10 մլրդ դրամ: Ադրբեջանի կողմից պարտադրված սպառազինությունների մրցավազքի ընթացքում հավասարակշռության պահպանումը ՀՀ անվտանգության կարևոր պայման է, ինչը ստիպում է ավելի մեծածավալ միջոցներ տրամադրել հատկապես ռազմական արդյունաբերության զարգացմանը, Պաշտպանական ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներին, որի արդյունքում Հայաստանը տեսանելի ապագայում կկարողանա սպառազինությունների իր պահանջմունքը բավարարել սեփական արտադրության հաշվին: Արդյունաբերության մեջ ռազմական պատվերների ավելացումն իր հերթին կբերի հազարավոր նոր աշխատատեղերի ստեղծման, սոցիալական լարվածության նվազման, գիտության խթանման:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
223.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Ազգային անվտանգության ծառայության բյուջետային ֆինանսավորումը՝ արտաքին հետախուզության և հակահետախուզության մասով ավելացնել 7,6 մլրդ դրամով (շուրջ 20 մլն դոլարով): Մի	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	<p>Կողմից Ադրբեջանի կողմից ռազմական սպառնալիքի ավելացման, մյուս կողմից՝ սահմանները հատող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ ցածր վերահսկողության պայմաններում անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ հատկացնել Ազգային անվտանգության ծառայությանը՝ արտաքին հետախուզության և հակահետախուզության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Նախատեսվող միջոցների մի մասն ուղղել «Լյուստրացիայի (գաղտնագերծման) մասին» օրենքով նախատեսվող միջոցառումների իրականացմանը:</p> <p>Պահանջվում է «Լյուստրացիայի (գաղտնագերծման) մասին» օրենքի ընդունում և համապատասխան օրենքներում փոփոխությունների իրականացում:</p>	
224.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	Կալանավայրերին հատկացվող գումարն ավելացնել 2 մլրդ դրամով: ՀՀ տարածքում գործող կալանավայրերի մշտադիտարկում իրականացնող իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները բազմիցս ահազանգել են դրանցում բանտախցերի գերբեռնվածությունը, այդ խցերի հակասանիտար պայմանները, կոմունալ-կենցաղային պայմանների անբավարար մակարդակը: Նշված գումարներն անհրաժեշտ է ուղղել կալանավայրերի վերանորոգման, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման և բանտախցերի տարածքների ավելացմանը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
225.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	Գյուղատնտեսության սուբսիդավորման նպատակով հատկացվող միջոցները կրկնապատկել ավելացնելով 10 մլրդ դրամով: Մաքսային գերազատական ռեժիմի և Հայաստանի հետ առևտուր անող որոշ արտերկրների կողմից՝ իրենց գյուղատնտեսական արտադրողների հանդեպ սուբսիդավորման և հովանավորչության քաղաքականության կիրառման պայմաններում Հայաստանի գյուղատնտեսական արտադրությունը շատ դեպքերում դառնում է անմրցունակ ներկրվող էժան գյուղատնտեսական մթերքների հանդեպ, ինչը հարվածում է տեղական արտադրողին, թույլ չի տալիս Հայաստանի գյուղմթերքներ արտադրողներին զարգացնել արտադրական ենթակառուցվածքները:	ՀՀ 2012թ. պետական բյուջեի նախագծում գյուղատնտեսության սուբսիդավորման նպատակով նախատեսված է միայն տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը (578 մլն դրամ): Հետևաբար հստակեցման կարիք ունի սուբսիդավորման նպատակով հատկացվող միջոցների կրկնապատկման առաջարկությունը: Բացի այդ չի ներկայացվել սուբսիդավորման հնարավոր ուղղությունները, մեխանիզմները և ակնկալվող արդյունքները: Միաժամանակ, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			հերթությունից առաջարկությունը չի ընդունվել:
226.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	Ոռոգման նպատակով հատկացվող բյուջետային միջոցներն ավելացնել 5 մլրդ դրամով: Այս միջոցներն ուղղել բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի ջրօգտագործումն ամբողջությամբ սուբսիդավորելուն՝ խթանելով այդ տարածքներում գյուղմթերքների արտադրության աճը, ինչն իր հերթին կբարելավի տեղի բնակչության սոցիալական վիճակը, կպահի գյուղացուն իր հայրենի բնակավայրում: Սա էլ իր հերթին կարևոր է սահմանների ամրապնդման տեսանկյունից:	Ջրօգտագործողների ընկերությունների 2012թ. պետական ֆինանսական աջակցության գնահատվող չափաքանակները հաստատվել են ՀՀ կառավարության 30.09.2010թ. «Ջրօգտագործողների ընկերություններին պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարությանը հավանություն տալու և ռազմավարությունից բխող առանձին միջոցառումների իրականացումն ապահովելու գործողությունների մասին» N1291-Ն որոշմամբ:
227.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Շրջակա միջավայրի, այդ թվում՝ օդի աղտոտման դեմ պայքարի համար հատկացնել հավելյալ 2 մլրդ դրամ: Շրջակա միջավայրի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում եւ հատկապես նրա քաղաքներում գտնվում է անմխթար վիճակում : Առաջարկվող հավելյալ միջոցներն առաջարկվում է ուղղել համապատասխան գիտահետազոտական ինստիտուտներին՝ ապահովելու նրանց համար նորագույն սարքավորումներով՝ վերջիններիս կողմից համապատասխան հետազոտություններ կատարելու նպատակով: Այդ հետազոտությունների արդյունքում կառավարությանը, մյուս պետական մարմիններին կառաջարկվեն բնության պահպանության համալիր ծրագրեր, հատկապես պոչամբարների բացասական ազդեցությունը մեղմելու եւ ձեռնարկությունների էկոլոգիապես վտանգավոր արտանետումները չեզոքացնելու ուղղությամբ: Հատկացվող գումարներից 100 մլն դրամը դրամաշնորհների տեսքով ուղղել բնապահպանական հասարակական կազմակերպություններին՝ առավել արդյունավետ բնապահպանական ծրագրեր իրականացնելու, շրջակա միջավայրին վտանգ սպառնացող ծրագրերի հանդեպ հասարակական վերահսկողություն ապահովելու նպատակով:	Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեն ձևավորվում է ծրագրային ֆինանսավորման սկզբունքի հիման վրա, իսկ ներկայացված առաջարկը կրում է ընդհանրական բնույթ, ինչպես նաև, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից, առաջարկությունը չի ընդունվել:
228.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Կենսաբազմազանության եւ բնության պաշտպանության համար հատկացնել հավելյալ 1 մլրդ դրամ: Հայաստանի բնությունը աշխարհի գիտնականներին հայտնի է որպես կենսաբազմազանությամբ առավել հարուստներից մեկը, ինչը	Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեն ձևավորվում է ծրագրային ֆինանսավորման սկզբունքի հիման վրա, իսկ ներկայացված առաջարկը կրում է ընդհանրական բնույթ, ինչպես նաև, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		սակայն վտանգված է անվերահսկելի որսորդությամբ, ձկնորսությամբ եւ բնական պաշարների անխնա շահագործմամբ : Կենսաբազմազանության եւ բնության պաշտպանության համար բյուջեով նախատեսված 3,8 մլրդ դրամը անբավարար է այս խնդիրը լուծելու համար:	տեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից առաջարկությունը չի ընդունվել:
229.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	<p>Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի համալիր մշտադիտարկման (մոնիտորինգի) եւ գնահատման իրականացման նպատակով հատկացնել 900 մլն դրամ:</p> <p>Առաջարկվող բյուջետային հատկացումը անհրաժեշտ է «Ժառանգություն» կուսակցության կողմից 2012թ. բյուջեի համար առաջարկած բնապահպանական վճարների գանձման չափերի ավելացման, բնապահպանական միջոցառումների վրա կատարվող ծախսերի մեծացման համատեքստում: Հատկացվող միջոցներից 100 մլն դրամը տրամադրել 2012թ.-ին ճանապարհներին եւ բնակավայրերին (Հատուկ ուշադրություն դարձնելով Վանաձորին եւ Դիլիջանին) մերձակա սողանքավտանգ գոտիները մշտադիտարկման ռեժիմի տակ պահելու նպատակով: 2011թ. ընթացքում Տավուշի մարզում արձանագրված սողանքները, այդ թվում մարդկային զոհերով ուղեկցված, ի ցույց դրեցին նման աղետների կանխատեսման եւ պետական մակարդակով արձագանքելու մեր ցածր կարողականությունը: Առաջարկի ներառումը կնպաստի մեր բնակիչների համար սողանքային աղետների դիսկի նվազեցմանը:</p>	Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեն ձևավորվում է ծրագրային ֆինանսավորման սկզբունքի հիման վրա, իսկ ներկայացված առաջարկը կրում է ընդհանրական բնույթ, ինչպես նաև ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից առաջարկությունը չի ընդունվել:
230.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաֆֆի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	<p>«Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածի 05 բաժնի 06 խմբի 01 դասի «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրում» ծրագրի շրջանակներում համայնքներին տրվող 233,8 մլն դրամ սուբվենցիաների գումարը ավելացնել 10 մլրդ դրամով:</p> <p>ՀՀ ազգային հանքային պաշարները շահագործող ձեռնարկություններից բնապահպանական վճարների օրենքով սահմանված չափաբաժինները գանձելու արդյունքում առաջացած գումարների հաշվին հնարավոր է էապես ավելացնել այն համայք-</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ պարբերության համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրվող մասհանումների չափերը որոշվում են ելնելով նույն հոդվածում նշված համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների (2012թ-ի համար՝ 2008, 2009 և 2010թթ-ի) արդյունքներով պետական բյուջե փաստացի</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ներին տրամադրվող բյուջետային սուբվենցիաների ծավալները, որոնք առավել մեծ չափով են տուժում հանքարդյունահանումից եւ շրջակա միջավայրի աղտոտումից, այդ թվում՝ առողջապահական ենթակառուցյունների վերազինման եւ տեղի բնակչության հանգստի կազմակերպման նպատակով : Այս հավելյալ հատկացումներից 9 միլիարդը ուղղել Սյունիքի եւ Լոռու մարզերի համապատասխան համայնքներին :</p>	<p>վճարված բնապահպանական վճարների հանրագումարից՝ պակասեցնելով այն բյուջետային տարվան նախորդող առաջին երկու տարիների կտրվածքով (2012թ-ի համար՝ 2010 և 2011թթ-ի) սույն օրենքով սահմանված կարգով համապատասխան համայնքներին կատարված մասհանումների չափով:</p> <p>Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ մասհանումներ կատարվում են ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու, ջրային ավազան վնասակար նյութեր և միացություններ արտանետելու ու շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման համար սահմանված բնապահպանական վճարներից:</p> <p>Օրենքին համապատասխան կատարված հաշվարկների և ներկայացված ծրագրերի համաձայն ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով ««Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրում» ծրագրով նախատեսվել է 277.1 մլն դրամ:</p>
231.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան</p>	<p>Հիվանդանոցային ծառայությունների հատկացվող գումարներն ավելացնել 7 մլրդ դրամով:</p> <p>Ըստ գործող ՀՀ 12-րդ կառավարության 2007թ.-ին ընդունած 5-ամյա ծրագրի նախատեսվում էր առողջապահության վրա կատարվող ծախսերը ՀՆԱ-ի 1,6%-ից հասցնել 2,2%-ի, ինչը չի կատարվել: Մինչդեռ, անհրաժեշտ է ոչ թե թողնել բնակչությանը իշխող կուսակցությունների կողմից «բարեգործական առողջապահության» հույսին, այլ պետականորեն հոգալ մարդկանց առողջապահական կարիքները՝ բարձր պահելով ՀՀ քաղաքացիների արժանապատվությունը :</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
232.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	Մոր և մանկան բժշկական ծառայությունների համար հատկացվող գումարներն ավելացնել 3 մլրդ դրամով: Առողջապահության վրա կատարվող ծախսերի համամասնության էական ավելացումը ընդունվել է կառավարության կողմից որպես պարտավորություն, սակայն չի կատարվում: Պետք է ոչ թե թողնել բնակիչներին իշխող կուսակցությունների կողմից «բարեգործական առողջապահության» հույսին, այլ պետականորեն հոգալ մարդկանց առողջապահական կարիքները՝ բարձր պահելով ՀՀ քաղաքացիների արժանապատվությունը: Դա պետք է անել օլիգարխներին հարկային դաշտ բերելով:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
233.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	Մարզային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման համար Կառավարության առաջարկվող 2,327 մլրդ դրամ գումարն ավելացնել 14 մլրդ դրամով : Հավելյալ հատկացվելիք գումարն առաջարկում ենք ուղղել սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգմանը, ինչը կապահովվի այդ համայնքներում գյուղատնտեսական եւ այլ տիպի արտադրությունների զարգացման համար անհրաժեշտ տարրական ենթակառուցվածքների բարելավվում :	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
234.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	«ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N1 հավելվածով «Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում» ծրագրով Երեւան քաղաքի համար սահմանված հատկացումների ավելացում 2,7 մլրդ դրամով : Ավելացման համար առաջարկվող գումարը բաշխել հետեւյալ կերպ. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների սուբսիդավորում 700 մլն դրամ, Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ՝ 2 մլրդ դրամ, ուղղելով դրանք Երեւանի (հատկապես ծայրամասերի) բակերում արտաքին լուսավորության ապահովմանը :	Առաջարկությունը չի ընդունվել ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
235.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան</p>	<p>ՀՀ Ազգային ժողովին տրամադրվող 2,95 մլրդ դրամ գումարը ավելացնել 500 մլն դրամով: Գումարն ուղղել պարլամենտարիզմի զարգացմանը, ՀՀ ԱԺ գործունեության արդյունավետության բարձրացմանը եւ որպես իշխանության առանձին ու ինքնուրույն ճյուղի կայացմանը.</p> <p>1. Կրկնապատկել ԱԺ պատգամավորների օգնականների, ԱԺ եւ խմբակցությունների փորձագետների աշխատավարձերը: Վերջինը թույլ կտա ներգրավվել առավել փորձառու եւ բարձր պատրաստականություն ունեցող մասնագետների:</p> <p>2. ԱԺ պատգամավորներին եւս մեկ լրիվ դրույքով վարձատրվող օգնականի հաստիքների տրամադրման համար անհրաժեշտ ֆինանսավորմանը.</p> <p>3 Յուրաքանչյուր խմբակցությանը հավելյալ 9-10 փորձագետի լրիվ դրույքով հաստիքի հատկացմանը՝ հասցնելով այդ թիվը ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովների թվին .</p> <p>Պահանջվում է իրականացնել փոփոխություններ ԱԺ կանոնակարգ օրենքում:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p> <p>ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով պետական կառավարման մարմինների աշխատողների աշխատավարձի բարձրացում չի նախատեսվել, բացառությամբ ՀՀ օրենքներով պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ նախատեսված բնականոն աճերի՝ շուրջ 3%:</p>
236.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան</p>	<p>ՀՀ Սփյուռքի նախարարությանը հատկացվող 54 մլն դրամ բյուջետային միջոցների ավելացում 246 մլն դրամով:</p> <p>Այս գումարներն ուղղել Սփյուռքի, ինչպես նաև Հայաստանի զարգացման գործում նրա ներգրավման հնարավորությունների եւ մեխանիզմների հետազոտմանը, հայրենադարձությանը նվիրված ծրագրերի, նախարարության աշխատակազմի ավելացման, աշխատավարձերի բարձրացմանն ու աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորմանը :</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p> <p>ՀՀ սփյուռքի նախարարության պահպանման համար նախատեսված է 213.9 մլն դրամ:</p>
237.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան</p>	<p>Թանգարաններին եւ ցուցասրահներին հատկացվող 1,713 մլրդ դրամ գումարը ավելացնել 2 մլրդ դրամով :</p> <p>Այս առաջարկը միտված է Հայաստանի Թանգարաններին եւ ցուցասրահները ամբողջությամբ վերանորոգելուն, վերազինելուն, ընդարձակելուն, նոր ցուցանմուշներով ապահովելուն եւ անվտանգության եւ պահպանության ենթակառուցվածքներն ու միջոցառումները բարելավելուն: Այս առաջարկը անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Նոր սերունդների հայրենասիրական դաստիարակության, այլև տուրիզմի զարգացման ռազմավարության շրջանակներում:	
238.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	<p>Հուշարձանների և մշակութային արժեքների պահպանությանն ու վերականգնմանը հատկացվող 356 մլն դրամ գումարը ավելացնել 644 մլն դրամով :</p> <p>Այս հավելման շնորհիվ ընդլայնել վերականգնվելիք հուշարձանների և մշակութային արժեքների ցանկը:</p>	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
239.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	<p>Հավելյալ 3,8 մլրդ դրամի հատկացում (Կառավարության կողմից առաջարկվող բյուջեի նախագծում նախատեսված 1,7 մլրդ դրամի փոխարեն) ԽՍՀՄ փլուզման արդյունքում արժեզրկված ավանդների՝ ներառյալ 1990-ականների խաբված ավանդատուների կորցրած գումարները, փոխհատուցմանը: Անհրաժեշտ է կրկնապատկել փոխհատուցման գործակիցները, սահմանել փոխհատուցման ժամկետների հստակ ժամանակացույցեր: Մնացած տուժված ավանդատուների հասանելիք գումարները՝ վերը նշված գործակցով հաշվառելուց հետո ճանաչել որպես ներքին պարտք և տրամադրել նրանց հատուկ այդ նպատակով թողարկված համապատասխան ներքին փոխառության պարտատոմսեր: Առաջարկի ընդունումը նաև հնարավորություն կտա մեծացնել փոխհատուցում ստացողների ցանկը, որով կապահովվի սոցիալական արդարությունը:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p> <p>Միաժամանակ, ՀՀ կառավարության 28.04.2008թ. 28-ի N 380-Ա որոշմամբ հաստատված և ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ Կառավարության ծրագրի «4.4.2 Սոցիալական պաշտպանությունը» բաժնի վերջին, 7-րդ միջոցառմամբ նախատեսվել է, որ «Կառավարությունը շարունակելու է նախկին ԽՍՀՄ խնայբանկում եղած ավանդների քաղաքականությունը՝ արդեն իսկ ձևավորված ձևաչափով:»</p>
240.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	<p>Մանկատների շրջանավարտներին՝ պետական բնակարաններով ապահովելու ծրագրի համար 4 մլրդ դրամի հատկացում: Պետությունը մինչ այժմ չի կատարել սոցիալապես ամենախոցելի խմբերից մեկի՝ մանկատների շրջանավարտների հանդեպ իր սոցիալական պարտավորությունները: Նախորդ տարիներին մանկատների շրջանավարտներին՝ պետական բնակարաններով ապահովելու ծրագրի իրականացման նպատակով հատկացված միջոցներից հարյուր միլիոնավոր դրամներ յուրացվել են, որևէ մեկը դրա համար չի պատժվել, իսկ հարյուրավոր որբ երեխաներ մնացել են անօթևան : Ամենամանապաշտպան այս քաղաքացիների հաշվին բյուջետային խնայողություններ կատարելը հակասում է թե ՀՀ Սահմանադրությանը և թե տարրական բարոյական նորմերին:</p>	<p>Մանկատների շրջանավարտներին՝ բնակարաններով ապահովման խնդիրը լուծվելու է այլընտրանքային ճանապարհներով:</p> <p>ՀՀ կառավարության 30.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերով նախատեսվող անհրաժեշտ բնակարանների քանակը հաստատելու մասին» N^o 1051-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերով երեխաներին անհրաժեշտ բնակարանների քանակը:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերով նախատեսվում է հանրապետության տարբեր բնակավայրերում սոցիալական բնակֆոնդի համար կառուցված բազմաբնակարան շենքերից մանկատան շրջանավարտներին տրամադրել բնակարաններ: ՀՀ Կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 341-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում կառուցված բազմաբնակարան շենքերից հատկացվել են 6 մեկ-սենյականոց բնակարաններ, որոնց բաշխումը իրականացնելու է նախարարությունը: Եվս 12 բնակարան հատկացվել են Մարալիկում:</p> <p>Բացի այդ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակմակերես տրամադրել ՀՀ Լոռու մարզի մանկատան շրջանավարտներին:</p>
241.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան</p>	<p>Երիտասարդ եւ անօթեան ընտանիքների համար ցածրարժեք 1-2 սենյականոց բնակարանների (սոցիալական բնակարաններ) վարձակալում եւ ենթավարձակալությամբ տրամադրում պետության կողմից վարձի 50%-ով զեղչմամբ: Այս նպատակով հատկացնել 3 մլրդ դրամ:</p> <p>Այսօր Հայաստանում կան հազարավոր երիտասարդ ընտանիքներ, ովքեր ապրում են վարձված բնակարաններում, ինչը, բնակարանների վարձակալության շուկայական չարդարացված բարձր արժեքի պայմաններում ծանր բեռով է նստում նրանց ընտանեկան բյուջեների վրա: Բացի այդ, «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի տվյալներով՝ Երեւանում կան շուրջ 180 անօթեաններ՝ ծերեր, երեխաներ եւ միայնակ մարդիկ: Այս առա-</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ջարկության ընդունմամբ էապես կթեթևացվի երիտասարդ ընտանիքների ֆինանսական հոգսը, իսկ անօթեան մարդկանց կտրամադրվի կացարան, որը դրական ազդեցություն կունենա նրանց առողջական վիճակի բարելավման եւ մահացության կրճատման առումով:</p> <p>Այս հատկացումը միտված կլինի սոցիալական լարվածությունը մեղմելուն, արտագաղթը նվազեցնելուն:</p>	
242.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան</p>	<p>Պատերազմում զոհված, անհայտ կորած կամ խեղանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքների անդամներին, հայրենական պատերազմի մասնակիցներին, ստալինյան ռեժիմի օրոք բռնադատվածներին, փախստականների եւ բռնի տեղահանվածներին, Չերնոբիլի ատոմակայանի վրա տեղի ունեցած աղետի հետեւանքների վերացման գործողությունների մասնակիցներին տրամադրվող նպաստները կրկնապատկել: Միջոցառումը միտված է սոցիալական արդարության ապահովմանը, սոցիալական լարվածության մեղմացմանը, հայրենասիրական ոգու սերմանմանը:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>
243.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Րաֆֆի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան</p>	<p>Մարտի 1-ի 10 զոհերի ընտանիքներին միանվագ նպաստ վճարելու համար հատկացնել 500 մլն դրամ, իսկ առողջության համար ծանր հետեւանքներ պատճառած մարմնական վնասվածքներ ստացած 200 տուժողներին միանվագ նպաստ վճարելու համար հատկացնել 1 մլրդ դրամ: Ընդամենը հատկացնել 1.5 մլրդ դրամ: Մարտի 1-ի 10 զոհերի ընտանիքներից յուրաքանչյուրի համար նախատեսել միանվագ նպաստ 50 մլն դրամի չափով, իսկ առողջության համար ծանր հետեւանքների բերած մարմնական վնասվածքներ ստացած 200 տուժողներից յուրաքանչյուրի համար 1-12 մլն դրամ: Քանի որ 2008թ. Մարտի մեկին տեղի ունեցած բոլոր սպանությունները եւ մարմնական վնասվածքների պատճառումները պետական մարմինների ոչ իրավաչափ գործողությունների արդյունք են, հետեւաբար պետությունը պատասխանատվություն է կրում զոհվածների ընտանիքների եւ վիրավորների առջեւ եւ պարտավոր է առաջինների դեպքում ապահովել նրանց նվազագույն կենսական կարիքները՝ առաջիկա 40 տարվա համար, իսկ վիրավորների դեպքում փոխհատուցել նրանց բոլոր կորուստները՝ կապված առողջությանը պատճառած վնասի հետ:</p>	<p>Մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձություններում պետական մարմինների գործողությունների ոչ իրավաչափությունը ապացուցված փաստ չէ, ուստի որպես պետության պարտավորություն մարտի 1-ի 10 զոհերի ընտանիքներին և առողջական և/կամ մարմնական ծանր վնասվածքներ ստացած տուժողներին միանվագ նպաստները վճարելու առաջարկը համարում ենք անընդունելի:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Առաջարկության դիրքորոշումը»
244.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	Չորրորդ կարգի վթարային բազմաբնակարան բնակելի շենքերի ապամոնտաժման եւ դրանց բնակիչների համար այլ բնակարաններ կառուցելու եւ տրամադրելու նպատակով, իսկ 2-րդ եւ 3-րդ կարգի վթարային բազմաբնակարան բնակելի շենքերի դեպքում դրանց ապամոնտաժման կամ ամրացման աշխատանքներն իրականացնելու եւ ապամոնտաժված շենքերի բնակիչների համար այլ բնակարաններ կառուցելու եւ տրամադրելու նպատակով հատկացնել 12 մլրդ դրամ: Միջոցառումը առաջարկվում է իրականացնել հաշվի առնելով տարածաշրջանում երկրաշարժերի ակտիվացումը եւ դրանց կողմից նախեստաց վթարային շենքերի բնակիչների կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
245.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	Բավարար գումարներ հատկացնել հանրապետության տարածքով մեկ, այդ թվում մասնավորապես անմիջապես Դիլիջան եւ Վանաձոր քաղաքների ու այլ բնակավայրերի տարածքում սողանքների համալիր ուսումնասիրության, դրանց ռիսկերի նվազեցման ծրագրեր մշակելու եւ իրականացնելու համար: 2011թ. ընթացքում Տավուշի մարզում արձանագրված սողանքները, այդ թվում վերջինները մարդկային զոհերով ուղեկցված, ի ցույց դրեցին նման աղետների կանխատեսման եւ պետական մակարդակով արձագանքելու մեր ցածր կարողականությունը: Առաջարկի ներառումը կնպաստի մեր բնակիչների համար սողանքային աղետների ռիսկի նվազեցմանը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
246.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Նոյեմբերյանի ենթաշրջանում 1996թ. տեղի ունեցած երկրաշարժի (Կողբ էպիկենտրոնով) գոտում փոխհատուցման տրամադրման նպատակով երկրաշարժից տուժած տների գնահատման (որոնց համար երբեք փոխհատուցում չի տրվել) եւ փոխհատուցման համար միջոցների հատկացում: Ժամանակին Կառավարությունն այդ տարածաշրջանը ճանաչել է իբրեւ աղետի գոտի եւ փոխհատուցում է տրամադրել հատկապես երկրաշարժի էպիկենտրոնին անմիջապես հարող գյուղերի բնակիչներին (Կողբ, Բերդավան): Մինչդեռ այլ գյուղերում նույնպես եղել են ավերածություններ, որոնք արձանագրվել են մարզպետարանի կողմից եւ կառավարությունը խոստացել է աստիճանաբար լուծել խնդիրը, սակայն մինչ օրս չի լուծել:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
247.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Նոյեմբերյանի ենթաշրջանի Բերդավան համայնքի գյուղամեջը միջպետական ճանապարհին կապող «Կյանքի ճանապարհը», ինչպես նաև՝ գյուղամեջից դպրոց եւ մանկապարտեզ տանող ճանապարհները ասֆալտապատելու նպատակով (ընդհանուր երկարությունը 3700 մ), 84 մլն դրամ : Գյուղը սահմանամերձ է: Ադրբեջանի հետ ունի 15 կմ ընդհանուր սահման, շուրջ 865 տնտեսություն եւ 3300 բնակիչ, 1 դպրոց՝ ավելի քան 600 աշակերտով, մանկապարտեզ՝ շուրջ 7 տասնյակ երեխայով:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով «Կ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
248.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Բերդավան գյուղի մշակույթի տան վերանորոգման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարում եւ վերանորոգում: «Կ սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագրի համատեքստում մշակութային օբյեկտների պահպանում եւ զարգացում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով «Կ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
249.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Բերդավան գյուղի միջնակարգ դպրոցի ներքին սանհանգույցի անցկացում: Կրթական համակարգում անհրաժեշտ նվազագույն սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման նպատակով:	«Կ կառավարության 03.02.2011թ-ի № 108-Ն որոշմամբ «Կ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված «Կ կառավարության պահուստային ֆոնդից «Կ Տավուշի մարզի գ. Բերդավանի դպրոցի վերանորոգման նպատակով հատկացվել է 28.2 մլն դրամ: Լրացուցիչ գումարի հատկացման հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև «Կ 2013-2015 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
250.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Բերդավան գյուղի երկրորդ չգործող մանկապարտեզի կապիտալ հիմնանորոգման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարում և հիմնանորոգում : Սահմանամերձ գյուղերում նախադպրոցական կրթական համակարգի պահպանում և զարգացում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով «Կ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
251.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Բերդավան գյուղի՝ ոռոգման ջրով ապահովման համակարգի կառուցման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարում և կառուցում : Սահմանամերձ համայնքներին ոռոգման ջրով ապահովում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով «Կ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
252.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Դովեղ գյուղի՝ ոռոգման ջրով ապահովման (Սուրբ Սարգիս հանդամասից մինչև գյուղ) համակարգի կառուցման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարում և կառուցում: Սահմանամերձ համայնքներին ոռոգման ջրով ապահովում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
253.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի միջնակարգ դպրոցի կապիտալ վերանորոգման նպատակով հատկացնել 70.0 մլն դրամ: Կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	ՀՀ կառավարության 03.02.2011թ-ի № 108-Ն որոշմամբ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Տավուշի մարզի գ. Ոսկեվանի դպրոցի վերանորոգման նպատակով հատկացվել է 33.2 մլն դրամ: Լրացուցիչ գումարի հատկացման հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
254.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի մշակույթի տան վերանորոգման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարում և վերանորոգում: ՀՀ սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագրի համատեքստում մշակույթային օբյեկտների պահպանում և զարգացում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
255.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Միջոցներ նախատեսել Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի ամբուլատորիայի անավարտ շենքի կառուցման և շահագործման նպատակով: Գյուղը հանգուցային նշանակություն ունի Տավուշի մարզի Նոյեմբերյանի ենթաշրջանի արեւելյան՝ սահմանամերձ հատվածի համար և ամբուլատորիայի շահագործումը էպպես կթեթեացնի տարածաշրջանի բնակավայրերի բնակիչների առողջապահական կարիքները:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Ոսկեվանի ամբուլատորիան 2006թ-ին Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում հագեցվել է անհրաժեշտ սարքավորումներով և կահույքով, իսկ ամբուլատորիայի բժիշկները և բուժքույրերը անցել են ընտանեկան բժշկի և բուժքրոջ մասնագիտացում: «Երկիր միություն» բարեգործական կազմակերպության օժանդակությամբ սկսվել է Ամբուլատորիայի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			Նոր շենքի կառուցումը, սակայն 2010թ-ի օգոստոսից շինարարական աշխատանքները դադարեցվել են անհայտ պատճառներով:
256.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի մանկապարտեզի նոր շենք կառուցելու նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարում և իրականացում: Համայնքի մանկապարտեզի նախկին շենքը վթարային է և համայնքի ղեկավարության ջանքերով հանրակրթական դպրոցի որոշակի հատվածում գործում է նախակրթական վարժարան, ինչը, սակայն չի կարող փոխարինել լիարժեք գործող մանկապարտեզին:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
257.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Կոթի գյուղի մշակույթի տան վերանորոգման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարում և վերանորոգում: ՀՀ սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագրի համատեքստում մշակույթային օբյեկտների պահպանում եւ զարգացում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
258.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի գյուղապետարանի նոր շենքի կառուցման համար տրամադրել 70.0 մլն դրամ : Գյուղը սահմանամերձ է, միջին չափի, փոքած է մի քանի բլուրների վրա: Գյուղապետարանի հին շենքը, որը չափազանց անհարմարավետ է, գտնվում է գյուղի ծայրամասում: Այժմ ձեռք է բերվել տարածք, որը հավասարապես մոտ է գյուղի բոլոր ծայրամասերին: Գյուղն ունի 1500 բնակիչ, 407 տնտեսություն, 4կմ սահման Ադրբեջանի հետ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
259.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Տավուշի մարզում ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N 380-Ն որոշմամբ ստեղծված «Զիկատար» պետական արգելավայրի պահպանության ծառայությունների համար հատկացնել 18.730 մլն դրամ, իսկ անտառի և հատուկ պահպանվող տարածքների մասնագետների գործնական ուսուցման ծառայությունների համար 19.250 մլն դրամ, այդպիսով տրամադրել ընդհանուր 37.980 մլն դրամ : «Զիկատար» պետական արգելավայրի ստեղծման և պահպանության անհրաժեշտությունը բխում է «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայից, «Բուսական աշխարհի մասին» և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքների դրույթներից,	«Զիկատար» պետական արգելավայրի պահպանության ծառայությունների համար ՀՀ 2012թ. պետական բյուջեի նախագծով արդեն իսկ նախատեսվել է 15.0 մլն դրամ : Ինչ վերաբերում է անտառի և հատուկ պահպանվող տարածքների մասնագետների գործնական ուսուցման ծառայությունների համար առաջարկվող ծախսերին, ապա գտնում ենք նպատակահարմար այն իրականացնել սեփական միջոցների հաշվին:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 54 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարության և ազգային ծրագրի գործողությունների պահանջներին:	
260.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Արագածոտնի մարզի Արագածավան գյուղի թիվ 3 մանկապարտեզի շենքի վերանորոգման համար տրամադրել 1,5 մլն դրամ : Տարածքային համաչափ զարգացման ապահովում և նախադպրոցական կրթության ոլորտում նորմալ աշխատանքային պայմանների ստեղծում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
261.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի մանկապարտեզի կապիտալ վերանորոգման համար տրամադրել 5,5 մլն դրամ : Համայնքների համաչափ զարգացման և նախադպրոցական կրթության ոլորտում նորմալ աշխատանքային պայմանների ապահովման նպատակով:	ՀՀ կառավարության 03.02.2011թ-ի № 108-Ն որոշմամբ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի մանկապարտեզի վերանորոգման նպատակով հատկացվել է 2.85 մլն դրամ:
262.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի դասասենյակների վերանորոգման համար տրամադրել 2,4 մլն դրամ : Կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
263.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի դասասենյակների վերանորոգման համար տրամադրել 1,0 մլն դրամ : Կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
264.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի կաթսայատան կառուցման եւ ջեռուցման համակարգի անցկացման համար հատկացնել 30.0 մլն դրամ : Կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
265.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն»	Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի թիվ 9 միջնակարգ դպրո-	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տար-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	ցի կապիտալ վերանորոգման համար տրամադրել 20,0 մլն դրամ: Կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	վա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾ շրջանակներում:
266.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Գյումրու Պետական մանկավարժական քոլեջ ՊՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգման (դռների եւ պատուհանների վերանորոգում, միջանցքների եւ լսարանների հատակների լինոլեապատում, սանհանգույցների վերանորոգում եւ շենքի արտաքին կոսմետիկ երեսպատում) համար տրամադրել 23,0 մլն դրամ: Կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾ շրջանակներում:
267.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Էապես մեծացնել Սեանա լճի ջրածածկ անտառատնկարկների մաքրման ծառայությունների համար տրամադրվող միջոցները: Սեանա լճի մակարդակի անընդհատ բարձացման հետեանքով ջրածածկ անտառատնկարկների մաքրման համար տրամադրվող ֆինանսական միջոցները պետք է համարժեք լինեն պահանջվող աշխատանքների ծավալին: Նախորդած տարիների հատկացումները համաչափ չեն եղել, իսկ չմաքրված անտառատնկարկները շարունակում են լճի ճահճացման ու աղտոտման սպառնալիք ստեղծել:	Սեանա լճի ջրածածկ անտառատնկարկների մաքրման ծառայությունների համար ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված 125.4 մլն.դրամը համապատասխանում է մաքրման աշխատանքների կատարման ներկա հնարավորություններին:
268.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Հանել Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ ծրագրով (Հայաստանի հանրային հեռուստաընկերություն) հատկացումները: Տարիներ շարունակ պետական բյուջեում այս ծրագրի ֆինանսավորումը որևէ կերպ չի նպաստել հեռուստատեսային ոլորտում բազմակարծության, անաչառ, բարձրաճաշակ եւ հասարակությանը կրթող հաղորդումների ավելացմանը:	Առաջարկությունը չի ընդունվել, «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի հիմնական նպատակն է ուսումնասիրել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոյի եթերում հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքը: Այդ նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ն անց է կացնում սոցիոլոգիական և փորձագիտական հետազոտություններ, որոնք վերաբերում են հետևյալ ոլորտներին՝ հանրակրթություն, գիտություն, սպասարկում, տնտեսություն, մշակույթ, եկեղեցի, իրավունք, սպորտ, բանակ, հեռուստատեսություն, ռադիո, մամուլ, ինչպես նաև ԶԼՄ-ների վե-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>րաբերյալ իրենց տեսակետներն ու կարծիքներն են ներկայացնում մշակույթի, կրթության, գիտության բնագավառի, հասարակական կազմակերպությունների և հասարակական-քաղաքական կուսակցությունների, երիտասարդության ու ուսանողության ներկայացուցիչներ:</p> <p>Վերոնշյալ հետազոտությունների և հարցումների արդյունքները նպաստում են Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության ծրագրերի կառուցվածքում անհրաժեշտ փոփոխությունների կատարմանը, ինչպես նաև ծրագրերի կազմման գործընթացին հանրության մասնակցության ապահովմանը:</p> <p>Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» ծրագրի իրականացումը ապահովում է հեռուստատեսային ոլորտում բազմակարծություն և նպաստում է անկողմնակալ և բարձրաճաշակ հեռուստառադիոհաղորդումների ավելացմանը:</p>
269.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան</p>	<p>Սյունիքի մարզի թույլ բնակեցված մի շարք սահմանամերձ համայնքների՝ Յողունի, Սոֆլու, Տորոնիք, Դաստակերտ, Քիրս, Քյուրուտ և Աջիբաջ գյուղերի վերաբնակեցումը խթանելու նպատակով համայնքների խմելու ջրի ապահովման, լքված կիսաքանդ տների վերականգնման, Սոֆլու համայնքում դպրոցի շենքի վերականգնման, Սոֆլու-Քիրս-Աջիբաջ ճանապարհի կառուցման, Դաստակերտում մտուր-մանկապարտեզի կառուցման, ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման նպատակով ծրագրի և ֆինանսավորման ներառում բյուջեում:</p> <p>Նշված բոլոր համայնքները գտնվում են Նախիջեանի սահմանի անմիջական հարեանությամբ՝ 43 կմ երկարությամբ: Համայնքներում առկա են լքված եւ սեփականատերերի կողմից չօգտագործվող տներ: Բոլոր համայնքները ունեն բարենպաստ պայմաններ անասնապահության եւ գյուղատնտեսության զարգացման համար: Այդ համայնքների վերականգնման ծրագիր ունի մշակված «Զար-</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		թոնք հայության» սահմանամերձ գյուղերի վերաբնակեցման եւ զարգացման հասարակական կազմակերպությունը և կառավարությունը կարող է կազմակերպության հետ համագործակցված իրականացնել այն:	
270.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Բաժնի Հովհաննիսյան Ստյոպա Սաֆարյան	Օրենքով ամրագրել արգելք ՀՀ-ից ոսկու հանքանյութի և ծուլածոների արտահանումը, իսկ վերջինների՝ ՀՀ-ում արտադրված ամբողջ ծավալը շուկայական նվազագույն գներով գնել՝ համալրելով ՀՀ ոսկե-արծաթային պաշարները: Այս նպատակին ուղղել «Ժառանգության» բյուջետային առաջարկների իրականացման արդյունքում առաջացած բյուջեի պրոֆիցիտի միջոցները: Թե՛ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը և թե՛ մինչ այդ ընկած ժամանակաշրջանը ցույց տվեցին, որ ոսկին մնում է ամենաապահով և ամենալիկվիդային պահուստային միջոցը: Հայաստանը ունենալով ոսկու արտադրություն՝ չպետք է կորցնի իր ոսկե-արծաթային պաշարները առավել էժան գներով այդ ապրանքատեսակով համալրելու հնարավորությունը:	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Հայաստանի Հանրապետությունն անկախության հռչակման օրից որդեգրել է ազատ շուկայական տնտեսության ձևավորման և կայացման սկզբունքներ, որը նախատեսում է ներդրումների հուսալի իրավական պաշտպանվածության վրա խարսխված, սեփականության բազմաձևության և սեփականության բոլոր ձևերի հավասար իրավական պաշտպանության վրա հիմնված տնտեսական արդյունավետ համակարգի ստեղծում:</p> <p>Առաջարկության ընդունումը բացասաբար կանդադառնա վերոհիշյալ սկզբունքներով առաջնորդվող երկրի վարկանիշի վրա, որն իր հերթին կհանգեցնի տնտեսական համակարգի խաթարմանը, որն, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված է նաև հետևյալով.</p> <p>Հանրապետության հանքարդյունաբերության և մետաղագործական ոլորտը հիմնականում ներկայացված է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ և օտարերկրյա ներդրումներով ընկերություններով, ուստի համաձայն «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի՝ <i>օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններն իրավունք ունեն առանց լիցենզիայի արտահանել սեփական արտադրության արտադրանքը (աշխատանքները, ծառայությունները)</i>: Նույն օրենքի մեկ այլ դրույթի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող գործողությունների, ինչպես նաև օտարերկրյա ներդրողի կամ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկության նկատմամբ նշված</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով օտարերկրյա ներդրողների կրած բոլոր վնասները ենթակա են անհապաղ փոխհատուցման՝ ընթացիկ շուկայական կամ անկախ աուդիտների գնահատումներով որոշված գներով:</p> <p>Նույն օրենքը նախատեսում է, որ օտարերկրյա ներդրումները կարգավորող ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը:</p> <p>Միաժամանակ, հայտնում ենք, որ «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով լիցենզառուին իրավունք է վերապահված <i>տնօրինելու արդյունահանված օգրակար հանածոները</i>, ուստի այդ սահմանափակումը ևս կհանգեցնի ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի խախտմանը:</p>
271.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Ստյոպա Սաֆարյան	Գումար նախատեսել Տավուշի մարզի Բերդ համայնքում ֆուտբոլի դաշտ կառուցելու համար : Ինչպես ցույց է տալիս տարբեր համայնքներում մարզադաշտերի կառուցման փորձը, դա նպաստում է երիտասարդության օրը հագեցած դարձնելուն, առողջ սերունդ դաստիարակելուն և մարզերում մարզական կյանքը աշխուժացնելուն:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
272.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	<p>Գիտությանն ուղղված բյուջետային հատկացումները 2012թ-ի համար հասցնել բյուջեի 3 տոկոսին, այդ նպատակով գիտությանը հատկացնել հավելյալ 20 մլրդ դրամ:</p> <p>Համաձայն միջազգային հեղինակավոր հետազոտությունների որևէ երկրի զարգացման համար անհրաժեշտ է, որ նրանում գիտությանը հատկացվի ՀՆԱ-ի 2-3%-ը, մինչդեռ ՀՆԱ-ի 1%-ը այն շեմն է, որն անհրաժեշտ է, որպեսզի երկիրը գոնե պահպանի իր առկա մակարդակը, իսկ դրանից ցածր ֆինանսավորում ունենալու դեպքում երկրին սպասում է ետընթաց: Գիտությունը պետության</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p> <p>ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով գիտության ոլորտի ծախսերը նախատեսվում է 10 մլրդ 88 մլն դրամի չափով և աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 655.0 մլն դրամ կամ 6.94 տոկոս:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ամենաարդյունավետ, ռազմավարական ներդրումն է, որը թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ կտրվածքով բերում է մյուս բոլոր ճյուղերի առաջընթաց և ներդաշնակ զարգացման: Հայաստանում գիտության ֆինանսավորման ներկայիս մակարդակն անընդունելի է, բերում է մեր երկրի ունեցած հզոր գիտական ներուժի ոչնչացմանը, բազմաթիվ փայլուն գիտնականների արտագաղթին՝ «ուղեղների արտահոսքին»:	
273.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Գիտնականների կենսաթոշակներին զուգահեռ հավելավճարներ սահմանել կենսաթոշակի կեսի չափով: 2000 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետով գիտական կոչում ունեցող անձանց կենսաթոշակից բացի նախատեսված հավելավճարի չափով ավելացում:	Առաջարկությունը չի ընդունվել: Ներկայումս մշակվում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ, որտեղ փոփոխություններ են նախատեսվում նաև «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 19-րդ հոդվածում, միևնույն ժամանակ, հարկ է խնդրո առարկա հարցը դիտարկել ներկայումս ընթացող կենսաթոշակային բարեփոխումների համատեքստում:
274.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և այլ օժանդակ սարքերով ապահովման նպատակով հատկացվող 4,26 մլն դրամ գումարը ավելացնել 30 մլն դրամով: Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց գործունեությանը և հասարակությանը լիարժեք ինտեգրմանն անհրաժեշտ տարրական սարքավորումներով ապահովելը չի կարող կրել փուլային բնույթ, մինչդեռ Կառավարության կողմից այս նպատակով առաջարկվող 4,26 մլն դրամը խիստ անբավարար է խնդրի համալիր լուծման համար :	Առաջարկությունը չի ընդունվել: Համաձայն «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց «Արև» համակարգի ուսուցման և համակարգչային տեխնիկայի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 211-Ն որոշման դրույթների, նշված համակարգով պետական պատվերի շրջանակներում ուսուցում և համակարգչային տեխնիկա կարող են ստանալ տեսողության խնդիրներ ունեցող առաջին խմբի հաշմանդամներն ու հաշմանդամ երեխաները, ընդ որում առաջնահերթությունը տրվում է ուսանողներին, դպրոցի շրջանավարտներին, աշխատող հաշմանդամներին, որոնց աշխատանքն առնվում է համակարգչի հետ, աշխատանք փնտող երիտասարդ հաշմանդամներին: 2008 թվականից իրականացվող վերոնշյալ ծրագրով ուսուցում են ստացել և համակարգչային տեխնիկայով հիմնականում ապահովվել են երիտասարդ և խոստումնալից այն հաշմանդամները, որոնք ու-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ման կամ հետագայում աշխատանքի մեջ օգտագործելու են իրենց ստացած համակարգչային գիտելիքները: Սակայն, փորձը ցույց է տվել, որ նման շահառուների քանակը մեծ չէ, ավելի շատ դիմում են մեծահասակ հաշմանդամներ, որոնք ոչ համապատասխան կրթություն ունեն և ոչ էլ՝ աշխատելու հեռանկար: Ելնելով վերոգրյալից, ծրագրի ֆինանսավորման 2012թ. ավելացումը նպատակահարմար չենք գտնում:
275.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	2012թ. պետ. բյուջեով Համաշխարհային բանկի կողմից Արմավիրի մարզի ամբուլատորիայի համար հատկացված գումարը տրամադրել Արմավիրի մարզի Մեծամոր համայնքին: Արմավիրի մարզի ամբուլատորիայի համար նախատեսված գումարը հատկացնել Մեծամոր քաղաքի պոլիկլինիկայի հիմնանորոգմանը	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի երկրորդ փուլի լրացուցիչ № 7987-AM վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված է 13 ամբուլատորիա կառուցել միայն գյուղական համայնքներում: Մեծամորի ԲԿ պոլիկլինիկայի ծառայությունները նպատակահարմար և տնտեսապես արդյունավետ է տեղակայել Մեծամորի ԲԿ հիվանդանոցի տարածքում:
276.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Գրադարաններին հատկացվող գումարն ավելացնել ևս 1 մլրդ դրամով: Հայկական տպագրության 500-ամյակի առիթով ՅՈՒՆԵՍԿՕ-ն Երեւանը հռչակվել է 2012 թ. համաշխարհային գրքի մայրաքաղաք: Այդ նպատակով Հայաստանի գրադարաններին հատկացնելու համար նախատեսված 460 մլն դրամը բավարար չէ բոլոր գրադարանների վերազինման և արդիականացման, անհրաժեշտ նորագույն գրականությամբ համալրման համար : Այս առաջարկը պետք է դիտարկել նաեւ Հայաստանի տնտեսությունը գիտելիքահեն դարձնելու ռազմավարության շրջանակներում :	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
277.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Արմավիրի մարզի Մեծամոր համայնքին տրամադրել 20 մլն դրամ: ՀԱԷԿ-ի բալանսի վրա գտնվող Մեծամոր քաղաքի կեղտաջրերի կայանի համար հատկացնել գումար:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի կեղտաջրերի կայանը չի գտնվում ՀԱԷԿ-ի հաշվեկշռի վրա: Այն սպասարկվում է «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից:</p>
278.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան</p>	<p>Արմավիրի մարզի Մեծամոր համայնքին հատկացնել 150մլն դրամ: Մեծամորի ավագ դպրոցի վերանորոգում:</p>	<p>Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾ շրջանակներում:</p>
279.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան</p>	<p>Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին բնակարան տրամադրելու նպատակով հատկացնել 1մլրդ 237 մլն 500.0 հազ. դրամ «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրով 2007-2009թթ. ընթացքում նախատեսվել էր 1178,5 մլն դրամ, որից 953,7 մլն դրամը չի ծախսվել: «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանի հետ կապված ծախսեր» ծրագրով 2007-2009թթ. ընթացքում նախատեսվել էր 333,5 մլն դրամ գումար, որից 283,8 մլն դրամը չի ծախսվել: Առաջարկվում է այդ գումարները հատկացնել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և մանկատան շրջանավարտներին բնակարան տրամադրելու նպատակով:</p>	<p>Մանկատների շրջանավարտների բնակարաններով ապահովման խնդիրը լուծվելու է այլընտարանքային ճանապարհներով:</p> <p>ՀՀ կառավարության 30.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերով նախատեսվող անհրաժեշտ բնակարանների քանակը հաստատելու մասին» № 1051-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերով երեխաներին անհրաժեշտ բնակարանների քանակը:</p> <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերով նախատեսվում է հանրապետության տարբեր բնակավայրերում սոցիալական բնակֆոնդի համար կառուցված բազմաբնակարան շենքերից մանկատան շրջանավարտներին տրամադրել բնակարաններ: ՀՀ Կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 341-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում կառուցված բազմաբնակարան շենքերից հատկացվել են 6 մեկսենյականոց բնակարաններ, որոնց բաշխումը իրականացնելու է նախարարությունը: Եվս 12 բնակարան հատկացվել են Մարալիկում:</p> <p>Բացի այդ ՀՀ քաղաքաշինության նախարարու-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			թյան կողմից շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակմակերես տրամադրել ՀՀ Լոռու մարզի մանկատան շրջանավարտներին:
280.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Նախադպրոցական կրթությանը հատկացվող գումարներն ավելացնել 3 մլրդ դրամով: Առաջարկի նպատակն է նախադպրոցական կրթօջախների՝ մանկապարտեզների ցանցի ընդլայնումն և բարելավվումը: Այս միջոցառումը լուծելու է կարևորագույն սոցիալական և ռազմավարական խնդիրներ:	«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում կշարունակվեն նախադպրոցական ծառայությունների ներդրման միկրոծրագրերը, այդ թվում՝ 2012 թվականին կիրականացվի 70 միկրոծրագիր ՀՀ Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում, որի գումարը կկազմի 265272.0 հազար դրամ:
281.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Գիտնականների աշխատավարձը բարձրացնել կրկնակի չափով: Գիտության զարգացումը խթանելու լրացուցիչ պայմաններ ստեղծելու նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել, աշխատավարձերի բարձրացում կատարելը ցանկալի է ոչ միայն գիտնականների մասով, սակայն դա հնարավոր չէ, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
282.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	2001թ.-ին Իրանի տարածքում վթարի ենթարկված Յակ-40 ինքնաթիռի զոհված անձնակազմի՝ Օհանյան Համլետի/4 անչափահաս երեխա/, Վարդանյան Աթրահամի/3 անչափահաս երեխա/ և Գրիգորյան Սարգիսի ընտանիքներին փոխհատուցման հատկացում 5 տարվա ընթացքում ամբողջ պարտքը փակելու համար՝ 60,000.0: 2001թ.-ին Իրանի տարածքում վթարի ենթարկված Յակ-40 ինքնաթիռի զոհված անձնակազմի ընտանիքներին նպաստ վճարվել է մինչև 2008 թվականի փետրվարի 2-ը, որից հետո մինչ 01.02.10թ. պետությունը պետք է 15մլն. 134 հազար 351 դրամ հատկացներ, իսկ մինչև երեխաների չափահաս դառնալը՝ 45 մլն պետք է հատկացվի:	ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Այսինքն՝ իրավաբանական անձի՝ տվյալ դեպքում «Հայկական Ավիատիներ» ՓԲԸ-ի պարտավորությունների համար պատասխանատվություն է

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման հաշվարկի միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ հատուցման համար գումարների կապիտալացման, ինչպես նաև դրանց վճարման չափերը և կարգը սահմանում է կառավարությունը:</p> <p>Միաժամանակ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի 2-րդ մասի և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի N 914-Ն որոշմամբ հաստատվել է «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքերում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» կարգը, որով էլ կարգավորվում են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու հետ կապված հարաբերությունները:</p>
283.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան</p>	<p>«Սպեղանի» երգչախումբը ընդգրկել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկում և այդ նպատակով հատկացնել 30 մլն դրամ:</p> <p>Ելնելով «Սպեղանի» երգչախմբի բացառիկ հաջողություններից և ապագայում նրա ծրագրերից, որոնք պատիվ կբերեն մեր երկրին՝ մեր մշակույթը աշխարհին արժանապատվորեն ներկայացնելիս,</p>	<p>ՀՀ մշակույթի նախարարությունը մշտապես աջակցում է «Սպեղանի» երգչախմբի ծրագրերին և 2012 թվականին ևս պատրաստ է ֆինանսական աջակցություն տրամադրել երգչախմբի կողմից ներկայացված գեղարվեստական ծրագրերին: Ինչ վերաբերում է պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելուն, ապա, ելնելով ՀՀ պետական բյուջեի կանխատեսվող եկամուտների մակարդակից</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		առաջարկվում է «Սպեղանի» երգչախումբին տալ պետական կարգավիճակ	Նոր կազմակերպության ստեղծումն առայժմ նպատակահարմար չէ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Սպեղանի» երգչախումբը ստանում է նաև հովանավորչական ֆինանսավորում:
284.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակ-ցություն Անահիտ Բախշյան	Գիտելիքների գնահատման և թեստավորման կենտրոն՝ 87,000.0: Դպրոցներում գիտելիքների արտաքին գնահատման բոլոր ծախսերը (աշակերտների թվով տպագրված թեստերը) կենտրոնը վերցնում է իր վրա, այնինչ՝ նախկինում դա դրված էր դպրոցների վրա: 2012-ին առաջին անգամ ունենալու ենք 12-րդ դասարանի 37.600 շրջանավարտ և 2011 թվականի համեմատ հավելյալ 77 մլն. դրամը բավարար չէ: Առաջարկվում է այդ գումարը ավելացնել 10 մլն դրամով:	Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ 2012 թվականի շրջանավարտների հաշվով համապատասխան միջոցներ են նախատեսվել պետական ավարտական քննությունների անցկացման համար: Եվս 8.9 մլն դրամ էլ նախատեսվել է սովորողների գիտելիքների արտաքին ընթացիկ գնահատման գծով և լրացուցիչ միջոցներ տրամադրելու անհրաժեշտություն չկա:
285.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակ-ցություն Անահիտ Բախշյան	«Շարական» համույթն ընդգրկել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորվող պետական ոչ առետրային կազմակերպությունների ցանկում եւ հատկացնել 30 մլն դրամ: Պետական հովանավորություն ազգային մշակույթային արժեքների պահպանմանը:	2012 թվականին ՀՀ մշակույթի նախարարությունը պատրաստ է ֆինանսական աջակցություն տրամադրել «Շարական» համույթի կողմից ներկայացված գեղարվեստական ծրագրերին: Ինչ վերաբերում է պետական ոչ առետրային կազմակերպություն ստեղծելուն, ապա, ելնելով ՀՀ պետական բյուջեի կանխատեսվող եկամուտների մակարդակից նոր կազմակերպության ստեղծումն առայժմ նպատակահարմար չէ:
286.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակ-ցություն Անահիտ Բախշյան	Արարատի մարզի Դարակերտ-Երևան ավտոճանապարհի նորոգմանը հատկացնել 6 մլն դրամ: Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանի Դարակերտ համայնքը Երեւան քաղաքի հետ կապող ճանապարհի 1500 մ երկարության հատվածի վերանորոգման համար անհրաժեշտ է 6.0 մլն դրամ՝ համայնքի կապը Երևան քաղաքի հետ ապահովելու նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
287.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակ-ցություն Անահիտ Բախշյան	Սյունիքի մարզ Դաստակերտ համայնքին հատկացնել 50մլն դրամ: Դաստակերտ համայնքին ապահովել նախադպրոցական կրթական հաստատությունով: Համաձայն Կառավարության 2008-2015թթ. Ռազմավարական	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ծրագրի՝ «Պետությունը կուժեղացնի աջակցությունը գործող նախադպրոցական հաստատություններին: Կբարելավվեն գործող նախադպրոցական հաստատությունների շենքային, գույքային, ուսումնանյութական և այլ պայմանները, կբարձրացվեն դրանց կարողությունների օգտագործման արդյունավետությունը՝ համապատասխանեցնելով առկա հզորություններին և չափորոշիչների պահանջներին:</p>	
288.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան</p>	<p>Արարատի մարզի սահմանամերձ Լուսառատ համայնքի նախադպրոցական կրթական հաստատության վերանորոգման համար հատկացնել 40,0 մլն դրամ:</p> <p>Համաձայն Կառավարության 2008-2015թթ. Ռազմավարական ծրագրի՝ «Պետությունը կուժեղացնի աջակցությունը գործող նախադպրոցական հաստատություններին: Կբարելավվեն գործող նախադպրոցական հաստատությունների շենքային, գույքային, ուսումնանյութական և այլ պայմանները, կբարձրացվեն դրանց կարողությունների օգտագործման արդյունավետությունը՝ համապատասխանեցնելով առկա հզորություններին և չափորոշիչների պահանջներին»:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>
289.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան</p>	<p>Արարատի մարզի Դարակերտ համայնքի Մասիսի տարածաշրջանի նախադպրոցական կրթական հաստատության վերանորոգման համար հատկացնել 15մլն դրամ:</p> <p>Համաձայն Կառավարության 2008-2015թթ. Ռազմավարական ծրագրի՝ «Պետությունը կուժեղացնի աջակցությունը գործող նախադպրոցական հաստատություններին: Կբարելավվեն գործող նախադպրոցական հաստատությունների շենքային, գույքային, ուսումնանյութական և այլ պայմանները, կբարձրացվեն դրանց կարողությունների օգտագործման արդյունավետությունը՝ համապատասխանեցնելով առկա հզորություններին և չափորոշիչների պահանջներին» :</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>
290.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան</p>	<p>Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքի նախադպրոցական կրթական հաստատության վերանորոգման համար հատկացնել 20,0 մլն դրամ:</p> <p>Համաձայն Կառավարության 2008-2015թթ. Ռազմավարական</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ծրագրի՝ «Պետությունը կուժեղացնի աջակցությունը գործող նախադպրոցական հաստատություններին: Կբարելավվեն գործող նախադպրոցական հաստատությունների շենքային, գույքային, ուսումնանյութական և այլ պայմանները, կբարձրացվեն դրանց կարողությունների օգտագործման արդյունավետությունը՝ համապատասխանեցնելով առկա հզորություններին և չափորոշիչների պահանջներին»:</p>	
291.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան</p>	<p>70 մլն դրամով նվազեցնել ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված պետհամարանիշներ ձեռք բերելու համար Ոստիկանությանը տրամադրվող 173 մլն դրամ գումարը: Նշված գումարով փաստորեն նախատեսվում է ձեռք բերել 14.416.7 ավտոմեքենայի համար համարանիշներ, այն դեպքում, երբ յուրաքանչյուր ավտոմեքենայի համարանիշի համար տեղը վճարում է 12000 դրամ պետական տուրք: Այս գումարը բավարար է համարանիշը ձեռք բերելու համար եւ պետական բյուջեից առաջարկվող նվազեցումը 70 մլն ուղղել դպրոցաշինության ոլորտին:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել: Պետհամարանիշեր ձեռք բերելու նպատակային հատկացումների գումարը ՀՀ 2012թ.պետական բյուջեի նախագծով նախատեսված է ոչ թե 173.6մլն դրամ,այլ 236.2 մլն դրամ: 173.6մլն դրամ նախատեսված է անձնագրերի բլանկներ ձեռք բերելու համար: ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումները սահմանված կարգով իրացրել են, - 2007 թ -ին՝ 82059 միավոր (զույգ) պետհամարանիշ - 2008 թ-ին՝ 84751 միավոր - 2009 թ-ին՝ 47579 միավոր (կրճատումը նախորդ տարվա համեմատ մոտ 44%) - 2010թ-ին՝ 59445 միավոր (աճը նախորդ տարվա նկատմամբ՝ 25%) - 2011թ-ի 10 ամսում՝ 62611 միավոր, որը նախորդ 2010թ-ի նույն ժամանակահատվածում իրացվածից ավելի է 21613 միավորով կամ մոտ 35%- ով: - 2011թ-ին կանխատեսվում է իրացնել 75200 միավոր, կամ նախորդ տարվա համեմատ՝ 26,5%-ով ավելի: Պետհամարանիշի միավորի ներկայիս գնման՝ 3550 դրամ գնի հաշվարկով 2011թ պետական բյուջեով նախատեսված 236.2 մլն. դրամ գումարով ձեռք կբերվի 66544 միավոր պետհամարանիշ, ներառյալ 01.01.2011թ-ի դրությամբ 20105 զույգ պետհամարանիշների մնացորդը, 2011թ-ի տարեվերջի մնացորդը կկազմի մոտ 11449 զույգ կամ 30-40 օրվա պաշար:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			-2012թ. -ի համար նախատեսվում է պահպանել 2011թ. -ի մակարդակը:
292.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Սյունիքի մարզի Սևքար-Եղեգն ավտոճանապարհի 450,000.0: Սևքար-Եղեգն գյուղերի միջև 27 կմ ճանապարհի ասֆալտապատում: Սյունիքի մարզի Սևքար և Նրա մերձակա տարածքում գտնվող Շրվենանց, Չապնի, Եղեգն գյուղերի աշակերտները հաճախում են Սևքար գյուղում գտնվող միջնակարգ դպրոց: Այս ճանապարհի անսարք լինելը դժվարեցնում է այդ գյուղերում բնակվող աշակերտների տեղափոխումը դպրոց:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
293.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	«Արևածաղիկ» մանկապատանեկան ամսագրին հատկացնել 4 մլն դրամ: Ամսագիրը ամբողջությամբ ստեղծվում է երեխաների ուժերով և կոչված է երեխաների մասնակցությամբ պաշտպանել երեխաների իրավունքները՝ հատկապես հաշմանդամ երեխաներին:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
294.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Գեղարքունիքի մարզի Մարտունիի կենտրոնական գրադարանին հատկացնել 30 մլն դրամ: Մարտունիի կենտրոնական գրադարանի հիմնանորոգում պետական հովանավորություն գրադարաններին ծրագրի շրջանակում ֆինանսավորում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
295.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	«Փարոս» կամերային երգչախմբին հատկացնել 30 մլն դրամ: «Փարոս» կամերային երգչախմբին տալ պետական կարգավիճակ: Այն տարածաշրջանում հաշմանդամներից բաղկացած միակ երգչախումբն է:	«Փարոս» կամերային երգչախմբի մշակութային ծրագրերին՝ ստեղծագործական ներուժի պահպանման և խթանման նպատակով նախարարությունը մշտապես ցուցաբերում է ֆինանսական աջակցություն: Ինչ վերաբերում է երգչախմբի անդամների սոցիալական ապահովվածության բարելավմանը՝ կարծում ենք, որ խնդիրը հնարավոր է լուծել սոցիալական ուղղվածության համապատասխան կառույցների միջոցով: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Փարոս» երգչախումբը ստանում է նաև հովանավորչական ֆինանսավորում:
296.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակ-	Գարեգին Ղազարյանի և Տիգրան Հայազնի հեղինակած «1000 Հայագգի գեներալներ ծովակալներ» գրքի անգլերեն և թուրքերեն լեզուներով թարգմանության և տպագրության համար հատկացնել	ՀՀ մշակույթի նախարարությունը գրքի հեղինակ Տիգրան Հայազնի հետ քննարկել է գրքին մասնակիորեն աջակցելու հնարավորությունը և «Աջակցու-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	ցություն Անահիտ Բախշյան	10 մլն դրամ: Գրքում առկա բացառիկ տեղեկատվությունը օտարա- լեզու ընթերցողին հասանելի դարձնելու նպատակով:	թյուն գրականության հրատարակմանը» ծրագրում ընդգրկել է գրքի 2012 թ. նախատեսվող անգլերեն հրատարակության ծախսերը:
297.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատ- գամավորական խմբակ- ցություն Անահիտ Բախշյան	«Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով հատկացնել 321 մլն դրամ: Վերականգնել «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծա- ռայությունների» պետպատվերին հատկացված գումարները՝ սո- ցիալապես անապահով խավին ստոմատոլոգիական ծառայու- թյունների մատուցման նպատակով:	Առաջարկությունը ընդունվել է: «Ստոմատոլոգիա- կան բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով ավելացվել է 321.0 մլն դրամ ի հաշիվ հետևյալ ծրագրային վերաբաշխումների. - «Անհետաձգելի բժշկական օգնության ծառա- յություններ» - 59.0 մլն դրամ, - «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայու- թյուններ» - 79.0 մլն դրամ, - «Երեխաներին բժշկական օգնության ծառայու- թյուններ» - 93.0 մլն դրամ, - «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազո- տություններ» - 90.0 մլն դրամ:
298.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատ- գամավորական խմբակ- ցություն Անահիտ Բախշյան	Ավելացնել «Բնակչության ԱԱՊ ծառայություններ» և «Նեղ մասնա- գիտացված բժշկական օգնության ծառայություններ» և «Նեղ մաս- նագիտացված բժշկական օգնության ծառայություններ քաղա- քականության միջոցառումների գծով ֆինանսավորումը, առնվազն մինչև 2011 թվականին համադրելի մակարդակը: Բնակչությանն առաջին բուժօգնության ծավալների ավելացման անհրաժեշտու- թյամբ պայմանավորված:	Առաջարկությունը չի ընդունվել: «Բնակչության առողջության առաջնային պահպան- ման ծառայություններ» ծրագրի գծով ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կան- խատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Իսկ ինչ վերաբերվում է «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին, ապա ընտանեկան բժշկության ներդրման պայման- ներում նեղ մասնագիտացված բուժօգնության ծա- վալների մի մասը ներառված է ընտանեկան բժիշկ- ների գործառույթներում, ուստի անհրաժեշտություն է առաջացել վերանայել նեղ մասնագետների կող-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			միջ իրականացվող բուժօգնության ծավալները: Նախատեսված միջոցների նվազեցումը կապված է նեղ մասնագետների կաբինետների թվաքանակի ճշգրտմամբ:
299.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակ-ցություն Անահիտ Բախշյան	<p>ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի սոցիալական ոլորտի հինգ ծրագրերը (որոնց նպատակն է այդ ծրագրերի շահառու խմբերի մասնագիտական վերապատրաստումը կամ այդ նպատակով խորհրդատվական ծառայությունների մատուցումը) հանել և գումարները հասցեագրել պետական բյուջեի կրթության ոլորտի ՄԿՈՒԶԱԿ-ին՝ որպես այդ ոլորտում լիազորված ու անհրաժեշտ կարողություններ ունեցող մարմին ավելի արդյունավետ կիրակա-նացնի այս գործընթացը Սոցիալական ոլորտի այդ հինգ ծրագրերն են.</p> <ol style="list-style-type: none"> 1. «ապահովագրական ստաժ չունեցող կամ մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չգբաղված հաշմանդամների» 13,100.0 /հազ.դրամ/: 2. «գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող» 228,900.0/հազ.դրամ/: 3. «երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգբաղված անձանց» 2,300.0/հազ.դրամ/: 4. «աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստումներ և խորհրդատվություն» 16,000.0 /հազ.դրամ/: 5. «մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չգբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ» 58,500.0 /հազ.դրամ/: 	<p>Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ.</p> <p>Զբաղվածության պետական ակտիվ ծրագրերից է մասնագիտական ուսուցման կազմակերպման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր): Ծրագրի տարեկան բյուջեն շուրջ 232 մլն դրամ է և նպատակն է ծրագրի մասնակիցներին աջակցել՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու միջոցով տեղավորվել հարմար աշխատանքի, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:</p> <p>Ծրագիրն իրականացվում է «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային 51 կենտրոններում հաշվառված և մասնագիտական պատրաստման, վերամասնագիտացման ու մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներին մասնակցելու ցանկություն հայտնաձև գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, երկարամյա ծառայության, արտոնյալ պայմաններով և մասնակի կենսաթոշակ ստացող չգբաղված, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող աշխատանք փնտրող անձանց համար:</p> <p>Ծրագիրը, որպես զբաղվածության պետական կարգավորման առանձին միջոցառում, պլանավորվում և իրականացվում է մյուս ծրագրերի համատեքստում՝ հաշվի առնելով լիազոր մարմնի կողմից իրականացվող աշխատաշուկայի խորքային վերլուծությունների և կանխատեսումների արդյունքները:</p>
300.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակ-	ՀՀ կառավարությանն առընթեր Գիտելիքների թեստավորման կենտրոն ՊՈԱԿ-ին հատկացնել հավելյալ 11 մլն դրամ: 2012-ին	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ «Աշխատանք փնտրող չգբաղված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ»

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	ցություն Անահիտ Բախշյան	հանրապետությունը կունենա 37600 շրջանավարտ, որոնց միասնական ավարտական քննությունները կազմակերպելու նպատակով 2012-ի բյուջեում 77 մլն ավելացումը բավարար չէ այդ քննությունները պատշաճ կազմակերպելու համար: Առաջարկում են կասեցնել «Կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցում» ծրագիրը և հարկացված 11.0 մլն դրամը տրամադրել Գիտելիքների թեստավորման կենտրոն ՊՈԱԿ-ին:	ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) զբաղվածության պետական ակտիվ ծրագրերից է, որը բխում է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածից: Ծրագրի նպատակն է գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման միջոցով աջակցել հաշմանդամին տեղավորվելու հարմար աշխատանքի, իսկ գործատուին՝ համալրել առկա թափուր աշխատատեղը: Ծրագիրը մեծացնում է աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքի տեղավորման հնարավորությունները և ապահովում է նրանց զբաղվածությունը: 2012թ. նախատեսվել է ծրագրում ընդգրկել 55 հաշմանդամ անձանց: Ինչ վերաբերում է ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ին նախատեսված միջոցների ավելացմանը, ապա նշված ՊՈԱԿ-ին՝ 2012 թվականի շրջանավարտների հաշվով համապատասխան միջոցներ են նախատեսվել պետական ավարտական քննությունների անցկացման համար և լրացուցիչ միջոցներ տրամադրելու անհրաժեշտություն չկա:
301.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	2012 թ. պետական բյուջեում առանձին տողով գումար հատկացնել «Հանրակրթության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սովորողների տարեկան բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտությունների համար: Համաձայն «Հանրակրթության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Սովորողների առողջության պահպանման և ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կանխարգելելու, վերականգնելու նպատակով յուրաքանչյուր սովորող տարին առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն՝ ուսումնական հաստատության բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում	Նշված պրոֆիլակտիկ հետազոտությունները ընգրկված են առողջ երեխայի հսկողության պարտադիր ծավալներում և այն կիրականացվի 2012 թվականի բյուջեի նախագծով նախատեսված միջոցների շրջանակներում: Մասնավորապես դպրոցներում աշակերտների բժշկական օգնության և սպասարկման բուժկետերի համար նախատեսված է 454.2 մլն դրամ, ինչպես նաև առողջ երեխայի հսկողության շրջանակներում ըստ տարիքային առանձին խմբերի պոլիկլինիկաների կողմից իրականացվում են ՀՀ ԱՆ կողմից հաստատված չափորոշիչներին համա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		քում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:	պատասխան մի շարք պրոֆիլակտիկ քննություններ և հետազոտություններ: Քանի որ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները ընդգրկում են մի քանի տեսակի բժշկական օգնություն և սպասարկում /բուժքույրերի կողմից սպասարկում դպրոցներում, նեղ մասնագիտացված խորհրդատվություններ, լաբորատոր-գործիքային հետազոտություններ, դժվարամատչելի հետազոտություններ/, ուստի նպատակահարմար չէ այդ միջոցառումները իրականացնել մեկ ծրագրերի շրջանակներում:
302.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Սյունիքին մարզի Գորիս համայնքին հատկացնել 30 մլն դրամ: Գորիսի թիվ 1 Ակսել Բակունցի անվան ավագ դպրոցի վերանորոգում:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
303.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Սյունիքի մարզի Գորիս համայնքին հատկացնել 30 մլն դրամ: Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի հիմնանորոգման նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
304.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Սյունիքի մարզի Խնածախ համայնքին հատկացնել 50 մլն դրամ: Համայնքի դպրոցի հիմնանորոգման նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
305.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Երեւանի Լեռի անվան թիվ 65 դպրոցին հատկացնել 150 մլն դրամ: Երեւանի Լեռի անվան թիվ 65 դպրոցի հիմնանորոգում կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
306.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Գորիս համայնքին տրամադրել 100 մլն դրամ: Գորիսի Պետական Համալսարանի 2-րդ մասնաշենքի վերանորոգման նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾժ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Անահիտ Բախշյան		
307.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Արարատի մարզի սահմանամերձ Լուսառատ համայնքի դպրոցի վերանորոգման նպատակով հատկացնել 100 մլն դրամ: Կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	ՀՀ կառավարության 03.02.2011թ-ի № 108-Ն որոշմամբ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Արարատի մարզի Լուսառատի դպրոցի ջեռուցման համակարգի ներդրման նպատակով հատկացվել է 6.0 մլն դրամ: Լրացուցիչ գումարի հատկացման հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
308.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղից Դարանակ 20 կիլոմետր ճանապարհի վերանորոգման համար հատկացնել 50 մլն դրամ: Միջհամայնքային կոմունիկացիայի ապահովման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
309.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	Գիտելիքների գնահատման եւ թեստավորման կենտրոնին հատկացվող գումարն ավելացնել 11 մլն դրամով: Դպրոցներում գիտելիքների արտաքին գնահատման բոլոր ծախսերը (աշակերտների թվով տպագրված թեստերը) իրենք են վերցնում իրենց վրա, այնինչ՝ նախկինում դա դրված էր դպրոցների վրա:	Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ին, սովորողների գիտելիքների արտաքին ընթացիկ գնահատման գծով, նախատեսվել է 8.9 մլն դրամ և լրացուցիչ միջոցներ տրամադրելու անհրաժեշտություն չկա:
310.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան	2012 թվականի պետական բյուջեից հանել «Լեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի» համար նախատեսված գումարները: Բյուջեի միջոցների խնայում. ՀՌԱՀ-ը տարիներ շարունակ իր կանոնադրական լիազորությունները փաստորեն չկատարելու համար:	Լեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի պահպանման համար ծախսեր նախատեսվել են ելնելով «Լեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջներից:
311.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Անահիտ Բախշյան, Արմեն Մարտիրոսյան	Սուբսիդավորել համայնքների ենթակայության տակ գտնվող երաժշտական դպրոցները և մարզադպրոցները ուսուցիչների եւ մարզիչների աշխատավարձը բարձրացնելու նպատակով ներկայումս 1 դրույքը դարձնել 60000 դրամ: Երաժշտական դպրոցների ուսուցիչների եւ մարզադպրոցների մարզիչների աշխատա-	Պետական բյուջեից միջոցները հատկացվում են միայն երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար: Ինչ վերաբերում է ուսուցիչների և մարզիչների աշխատավարձի բարձրացման նպատ-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		վարձի բարձրացումը պետական բյուջեի հաշվին կնպաստի համայնքների մշակութային կյանքի համաչափ զարգացմանը եւ կկանխի մասնագետների արտահոսքը համայնքներից:	տակով համայնքային ենթակայության երաժշտական դպրոցների և մարզադպրոցների սուբսիդավորմանը, ապա առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
312.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	<p>Նվազագույն աշխատավարձն ավելացնել 32.500 դրամով՝ մինչև 65.000 դրամ, այսինքն՝ մինչև նվազագույն կենսապահովման զամբյուղի ցուցանիշը:</p> <p>Կենսապահովման զամբյուղը հաշվարկված է որպես մեկ անձի կենսագործունեության համար անհրաժեշտ նվազագույն գումար, որից ցածր նվազագույն աշխատավարձի շեմ սահմանելը հակառամաբանական է, հակամարդկային, հակասում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ-ի կողմից վավերացված բազմաթիվ միջազգային կոնվենցիաների դրույթներին: Բացի դա, նվազագույն աշխատավարձի ավելացումը 32.500 դրամով ոչ պետական ոլորտի գործատուների կողմից սոցիալական վճարների ավելացման շնորհիվ բյուջե կբերի ավելի մեծ գումար, քան թե կպահանջվի նվազագույն աշխատավարձի այդ ավելացումն ապահովելու համար:</p> <p>Պահանջվում է իրականացնել փոփոխություններ համապատասխան օրենքներում:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Նվազագույն աշխատավարձը 32500 դրամից 65000 դրամ սահմանելու դեպքում կտրուկ կավելանան ՀՀ պետական բյուջեի ծախսերը, ինչը 2012 թվականի պետական բյուջեի կանխատեսվող եկամուտների պայմաններում հնարավոր չէ ապահովել:</p> <p>Ներկայացված առաջարկության նպատակահարմարության հարցը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ գործող օրենսդրության պայմաններում նվազագույն աշխատավարձի բարձրացումը կհանգեցնի հարկվող եկամուտների նվազեցման, ինչի հետևանքով եկամտահարկի մասով պետական բյուջեի եկամուտների նվազեցումը մոտ 14 մլրդ դրամով կգերազանցի պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, ինչն իր հերթին կհանգեցնի պետական բյուջեի եկամուտների ընդհանուր ծավալի նվազեցմանը:</p>
313.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	<p>Զարգացած շուկայական երկրներում (ԱՄՆ, Եվրոպական) գործող սխեմաներով շահույթով վիճակախաղերի (լոտոների) հանդեպ պետական վերահսկողության և կարգավորման հաստատում և դրանից գոյացած շահույթի ուղղում արտաբյուջետային հատուկ հիմնադրամ արդեն 2012թ-ին մուտքագրելով այդ հիմնադրամին 10-15 մլրդ դրամ:</p> <p>Հատուկ հիմնադրամում կուտակված գումարն առաջարկվում է երեք հավասար մասնաբաժիններով ուղղել կրթության, գիտության և պաշտպանության հավելյալ/հատուկ ծրագրերի ֆինանսավորմանը: Որպես օրինակ առաջարկվում է վերցնել «Եվրամիլիոն» լո-</p>	Առաջարկությունում ներկայացված երկրներում վիճակախաղերի կազմակերպումը հանդիսանում է պետական մենաշնորհ՝ մեկ օպերատորով (մասնավորապես ներկայացված դեպքում՝ «Camelot» կազմակերպությունն է շահույթ ստանում): Այդ կապակցությամբ, հայտնում ենք, որ ՀՀ որդեգրել է տնտեսության ազատականացման ճանապարհը և ՀՀ-ում ազատ շուկայական հարաբերությունների և մրցակցության հիման վրա նշված գործունեությամբ կարող է զբաղվել ՀՀ-ում գրանցված ցանկացած իրավաբանական անձ և տվյալ բնագավառում չկա որևէ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Առաջարկության դիրքորոշումը»
		<p>տոն: Դա եվրոպական լոտոյի տեսակ է, որը ստեղծվել է Ֆրանսիայում «Française des Jeux» -ի, Իսպանիայում «The Loterías y Apuestas del Estado»-ի և Միացյալ Թագավորությունում «Camelot»-ի կողմից 2004թ-ի փետրվարի 7-ին: 2004թ-ի օգոստոսի 8-ից նրանց են միացել Իռլանդիան, Բելգիան, Պորտուգալիան, Շվեյցարիան, Ավստրիան, Լյուքսեմբուրգը: Բոլոր շահումները, բացառությամբ Շվեյցարիայում, ենթակա չեն հարկման և վճարվում են միանվագ ձևով: Միացյալ Թագավորությունում Եվրոմիլիոնից ստացված եկամուտներն օգտագործվում են հետևյալ կերպ. 0,5%՝ «Camelot»-ի շահույթն է, 4,5%՝ օգտագործվում է ծախսերի համար, 5%՝ օգտագործվում է վաճառքի համար, 12%՝ Կառավարությանը, 28%՝ Բարեգործության համար, 50% ուղղվում է մրցանակային ֆոնդ: Հայաստանի դեպքում մրցանակային ֆոնդն առաջարկվում է նվազեցնել մինչև 40%-ը, իսկ Կառավարությանը գումարներ չտրամադրել, այլ կրթության, գիտության և պաշտպանության հավելյալ/հատուկ ծրագրերի ֆինանսավորմանն ուղղել 40%-ը:</p> <p>Պահանջվում է օրենսդրական փոփոխություն:</p>	<p>տնտեսվարող սուբյեկտ, որը ունենա մենաշնորհ: Ինչ վերաբերում է հատուկ հիմնադրամում կուտակված գումարի՝ երեք հավասար մասնաբաժիններով, կրթության, գիտության և պաշտպանության հավելյալ/հատուկ ծրագրերի ֆինանսավորմանն ուղղելու առաջարկին, ապա հայտնում եք, որ նման օրինակով ցանկացած այլ բնագավառի կողմից վճարվող հարկերը կարելի է կցել որոշակի ծախսերի, որի արդյունքում կխաթարվի պետական բյուջեի միասնականության սկզբունքը:</p> <p>Ելնելով նշվածից առաջարկության ընդունումը համարում ենք անընդունելի:</p>
314.	<p>«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան»</p>	<p>Էկոլոգիապես մաքուր քաղաքային տրանսպորտի (մետրո և տրոլեյբուս) զարգացմանն ուղղել լրացուցիչ միջոցներ՝ 600 մլն դրամի չափով: Էկոլոգիապես մաքուր քաղաքային տրանսպորտի մասնաբաժնի ավելացումը այլ տեսակի տրանսպորտի համեմատ, դրանից օգտվելու հարմարավետության մեծացումը կլուծի Երեւանի օդի աղտոտման նվազեցման խնդիրը:</p>	<p>«Առաջարկության պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում Երևանի մետրոպոլիտենի ընթացիկ պահպանման և ենթակառուցվածքների նորոգման գծով լրացուցիչ նախատեսվել է 350 մլն դրամ»:</p>
315.	<p>«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան»</p>	<p>Ազատել էլեկտրաէներգիայով սնուցվող շարժիչներով աշխատող, էկոլոգիապես մաքուր ավտոմեքենաները ներկրման բոլոր տեսակի մաքսերից, իսկ այդ ավտոմեքենաների էլեկտրասնուցման կայանների կառուցումը սուբսիդավորելու նպատակով հատկացնել 500 մլն դրամ: Միջոցառման նպատակն է խրախուսել էլեկտրաէներգիայով սնուցվող շարժիչներով աշխատող, էկոլոգիապես մաքուր ավտոմեքենաների ներկրումը հանրապետություն, ինչը երկարաժամկետ կտրվածքով դրական ազդեցություն կունենա քաղաքների օդի աղտոտվածության պակասեցման առումով:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել ելնելով «Առաջարկության պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p> <p>Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ «Առաջարկության» ներմուծման հարկումը բոլորովին այլ նպատակ է հետապնդում: Մասնավորապես, էլեկտրաէներգիայով աշխատող ավտոմեքենաները, որոնք հիմնականում բարձրարժեք ավտոմեքենաներ են, հարկվում են անգամ ակցիզային հարկով՝ որպես շքեղության առարկաներ: Ինչ վերաբերվում է էկոլո-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			գիական մաքրությանը, ապա դրան նպաստող գործիքները պետք է քննարկվեն բնապահպանական վճարների շրջանակներում:
316.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Հանրային առողջապահության ծառայություններն ավելացնել 2 մլրդ դրամով: Առողջապահության վրա կատարվող ծախսերի համամասնության էական ավելացումը ընդունվել է կառավարության կողմից որպես պարտավորություն, սակայն չի կատարվում: Պետք է ոչ թե թողնել բնակիչներին իշխող կուսակցությունների կողմից «բարեգործական առողջապահության» հույսին, այլ պետականորեն հոգալ մարդկանց առողջապահական կարիքները՝ բարձր պահելով ՀՀ քաղաքացիների արժանապատվությունը: Դա պետք է անել օլիգարխներին հարկային դաշտ բերելով:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
317.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Քաղաքական կուսակցություններին հատկացվող պետական ֆինանսավորումն ավելացնել 760 մլն դրամով: Քաղաքական համակարգի զարգացումը խոչընդոտված է պետության կողմից՝ հասարակության առավել լայն շերտերի շահերը ներկայացնող (խորհրդարանական ընտրությունների ընթացքում 3%-ոց շեմը հաղթահարած) կուսակցությունների խորհրդանշական, թերի ֆինանսավորմամբ: Մյուս կողմից բիզնեսը չի համարձակվում օրենքով թույլատրված ձևով և շրջանակներում ֆինանսավորել ընդդիմադիր կուսակցություններին: Սա բերում է նրան, որ ընդդիմադիր կուսակցությունները չեն ստանում որևէ էական ֆինանսավորում՝ իրենց պարտականությունների պատշաճ մակարդակով կատարելու համար, իսկ իշխող կուսակցությունները ամբողջությամբ ընկնում են նրանց ֆինանսավորող օլիգարխների ազդեցության տակ՝ ըստ էության խորհրդարանում սպասարկելով վերջինների շահերը: Անհրաժեշտ է իրականացնել համապատասխան փոփոխություններ կուսակցությունների մասին օրենքում և այլ հարակից օրենքներում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
318.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Նվազեցնել 2012թ.-ին նախատեսվող հարկային մուտքերը մարմնամարզական գործունեության կազմակերպման մասով ձեռնարկությունների՝ ԱԱՀ-ից և շահութահարկից ազատելու արդյունքում բյուջե չմուտքագրված գումարների չափով: Մարմնամարզական	Առաջարկության ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ մի երաշխիք չկա, որ արտոնություններ սահմանելուց հետո մարմնամարզական ձեռնարկու-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Արմեն Մարտիրոսյան	գործունեության հանդեպ ԱԱՀ-ի և շահութահարկի հանելը կբերի այդ ոլորտում բազմալիսի հաստատությունների խրախուսմանը՝ ծավալելու իրենց գործունեությունը, ինչը կնպաստի այս ոլորտում ավելի մեծ թվով քաղաքացիների, հատկապես երիտասարդների ներգրավմանը: Դա իր հերթին կնպաստի մեր երկրում առողջ ապրելակերպի տարածմանը, երիտասարդների մարզական պատրաստվածության ավելացմանը, արդյունքում բանակի և պահեստազորի մարտունակության բարձրացմանը: Պահանջվում է իրականացնել փոփոխություններ համապատասխան օրենքներում:	թյունների չեն պահպանի գերշահույթներ ստանալու ցանկությունը ոլորտում մատուցվող ծառայությունների սակագներ թողելով անփոփոխ:
319.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Արագածոտնի մարզ Չքնաղ-Ձորագլուխ միջհամայնքային ճանապարհի նորոգմանը հատկացնել 100 մլն դրամ: Արագածոտնի մարզի Չքնաղ գյուղից մինչև Ձորագլուխ գյուղ ճանապարհի 2.5 կմ վերանորոգում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
320.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Արարատի մարզի Արմաշ համայնքին հատկացնել 2 մլն դրամ: Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի 3-րդ մասնաշենքի ներքին հարդարման աշխատանքների համար՝ կրթության անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾ շրջանակներում:
321.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Արարատի մարզի Արմաշ համայնքին հատկացնել 1 մլն դրամ: Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի բակի ցանկապատի վերանորոգման կամ նոր ցանկապատի տեղադրման համար՝ կրթության անհրաժեշտ պայմանների բավարարման, ինչպես նաև՝ դպրոցի սեփականություն հանդիսացող գույքի պաշտպանության նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾ շրջանակներում:
322.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Արարատի մարզի Արմաշ համայնքին հատկացնել 2 մլն դրամ: Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի կոյուղու հիմնանորոգման աշխատանքների համար՝ կրթության անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾ շրջանակներում:
323.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	2011 թվականի պետական բյուջեի հոդված 9-ի 15-րդ կետով արտահերթ տրամադրվող «Հայրենական մեծ պատերազմի վետերանների» բառակապակցությունից հետո ավելացնել» և 75 տարին	Առաջարկությունը չի ընդունվել: «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	ցություն Արմեն Մարտիրոսյան	լրացած վետերաններին հավասարեցված անձանց» բառերը: Ըստ 2006 թվականի պետական բյուջեի հավելված 8-ի Դ) կետի Հայխնայքանկում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում նախատեսվում է տալ հայրենական Մեծ պատերազմի վետերաններին և նրանց հավասարեցված անձանց, մինչդեռ, «նրանց հավասարեցված անձանց» բառերը միշտ դուրս են մնացել պետբյուջեի նախագծերից: Սա հնարավորություն կտա սոցիալական արդարություն հաստատել գոնե 75 տարին լրացած վետերաններին հավասարեցված անձանց նկատմամբ:	պետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որը շարունակական բնույթ է կրում նաև 2011-2012 թթ. համար նախատեսվում է լուծել միայն 1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-րդ տարեդարձի առթիվ 1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմի վետերաններին նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման հարցը:
324.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Լոռու մարզի Ալավերդի քաղաքի հիվանդանոցից մինչև գյուղ Աբրոյի ճանապարհի (4 կմ) վերանորոգման համար հատկացնել 10 մլն դրամ: Գյուղը բնակչությամբ բավականին մեծաթիվ է, կապն անընդհատ Ալավերդի քաղաքի հետ է՝ ամենօրյա և մեծ հաճախականությամբ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
325.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի նախադպրոցական կրթական հաստատության հիմնանորոգման համար հատկացնել 30 մլն դրամ : Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղը ՀՀ ամենամեծ գյուղերից մեկն է, որտեղ չի գործում ոչ մի մանկապարտեզ: Սույն առաջարկի ընդունումով որոշակիորեն կկրճատվի երիտասարդ ընտանիքների արտագաղթը: Տարածքային համաչափ զարգացման ապահովում եւ նախադպրոցական կրթության ոլորտում նորմալ աշխատանքային պայմանների ստեղծում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
326.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի մշակույթի տան հիմնանորոգման համար հատկացնել 50 մլն դրամ : Այն կխթանի գյուղի երիտասարդական և մշակութային կյանքի ակտիվացմանը եւ կխոչընդոտի արտագաղթը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
327.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի առողջության կենտրոնում բացել թերապեւտիկ բաժանմունք: Այս առաջարկի ընդունումը	Վարդենիկի առողջության կենտրոնի ամբուլատոր մասը վերանորոգվել և հագեցվել է ՀԲ վարկային ծրագրի շրջանակներում, իսկ բժիշկները և բուժ-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	ցույցուն Արմեն Մարտիրոսյան	մը հնարավորության կտա որոշակիորեն բարելավել Վարդենիկ գյուղի և շրջակա համանքների բնակչության առողջական խնդիրները:	քույրերը անցել են ընտանեկան բժշկի և բուժքրոջ մասնագիտացում և ազգաբնակչությանը տրամադրում են որակյալ և մատչելի ԱՊԴ ծառայություններ: Վարդենիկի ԱԿ-ի մանկաբարձական բաժանմունքը թերծանրաբեռնվածության և համապատասխան մասնագետների բացակայության պատճառով փակվել է: Վարդենիկի ԱԿ-ում թերապևտիկ բաժանմունքի բացումը նպատակահարմար չէ:
328.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Արագածոտնի մարզի Թալինի շրջանի Ներքին Բազմաբերդ գյուղի մշակույթի տան վերանորոգման համար հատկացնել 50 մլն դրամ : Այն կխթանի գյուղի երիտասարդական և մշակութային կյանքի ակտիվացմանը և կխոչընդոտի արտագաղթը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
329.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Արմեն Մարտիրոսյան	Երեւանի թիվ 49 միջնակարգ դպրոցի մարզադահլիճի նորոգման համար հատկացնել 0.5 մլն դրամ: Կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
330.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Լարիսա Ալավերդյան	Տավուշի մարզի Իծաքար համայնքին հատկացնել 50 մլն դրամ: Միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցապատում	Հարցը կքննարկվի ընթացիկ (2012 թվական) տարվա գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
331.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Լարիսա Ալավերդյան	Տավուշի մարզի Իծաքար համայնքին հատկացնել 100 մլն դրամ: Ակումբի կամ մշակույթի տան կառուցում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
332.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արագածոտնի մարզի Ներքի Բազմաբերդ համայնքին հատկացնել 21,0 մլն դրամ: Գյուղամիջյան ավտոճանապարհի /4կմ/ նորոգում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Լարիսա Ալավերդյան		
333.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակ-ցություն Լարիսա Ալավերդյան	<p>Հարեան և այլ երկրներից տեղահանված ու Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած փախստականների ինչպես նաև ներքին տեղահանված անձանց բնակարանային խնդիրները լուծելու նպատակով հատկացնել 7 մլրդ դրամ գումար:</p> <p>Հարեան և այլ երկրներից տեղահանված ու Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած փախստականների, ինչպես նաև ներքին տեղահանված անձանց բնակարանային խնդիրները լուծումը կմեղմի երկրում առկա սոցիալական լարվածությունը, կնպաստի արտագաղթի տեմպերի նվազմանը: Միջոցները անհրաժեշտ է հատկացնել առետրային բանկերի տրամադրած հիպոթեքային վարկերի տոկոսադրույքների պետության կողմից 50%-ով համաֆինանսավորման եղանակով:</p>	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
334.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակ-ցություն Լարիսա Ալավերդյան	Փախստականների բնակարանային պայմանների բարելավման նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայությանը տրամադրել 815 մլն դրամ: Նշված գումարը հաշվարկված է պետական պատկան մարմինների կողմից եւ հաստատված է ՀՀ կառավարության կողմից, սակայն մինչ 2011 թվականը նշված գումարը չի տրամադրվել ՄԴԾ-ին:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
335.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակ-ցություն Լարիսա Ալավերդյան	2012թ. պետական բյուջեից 25 մլն դրամ գումար հատկացնել ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ-ին: Հաշվի առնելով կազմակերպության առաքելության կարեւորությունը երկրաշարժի գոտում: «Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ-ն կարող է տրամադրել հիմնավորված նախահաշիվ պահանջվող գումարի վերաբերյալ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
